

Կիպրահայ

ՎԱՐՂԱՆԱՆՑ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Խորհմաստ ասանդութեամբ մը, ամէն տարի Փետրուար ամսուան մէջ, Սրբոց Վարդանանց Ջօրավարաց 1036 Վկաներուն նուիրուած Տօնին, Նարեկ վարժարանները գեղեցիկ հանդիսութեամբ մը կը ոգեկոչեն Վարդանանց սրբազան յիշատակը, անգամ մը եւս հաղորդակից դառնալով անոնց ոգիին հետ՝ հաւատարիմ մնալու հայոց լեզուին, հաւատքին ու հայրենիքին, եւ, ի պահանջել հարկին, մահուան գնով պաշտպանելու հայեցի դիմագիծը բնորոշող այդ սրբազնագոյն արժէքները....

Հինգշաբթի, 27 Փետրուար 2014, կ. ա. ժամը 8:30-ին, Նարեկ վարժարաններու Նիկոսիոյ հանդիսասրահին մէջ, տեղի ունեցաւ Վարդանանց հանդիսութիւնը, կազմակերպութեամբ վարժարանի հայագիտական բաժնի ուսուցիչ-ուսուցչուհիներուն եւ մասնակցութեամբ ամբողջ աշակերտութեան: Ներկայ էին Թեմիս Կաթ. Փոխ. Տ. Վարուժան Արք. Հերկելեան, Տէր Սոմիկ քահանայ Հապէշեան, Հոգաբարձութեան ատենապետն ու անդամներ, ծնողներ, հիւրեր:

Յատկանշականօրէն, հանդիսութիւնը սկսաւ «Վարդանանք» բեմադրութեամբ, ուր Միջնակարգի եւ Զ. Դասարանի աշակերտները հարազատօրէն ներկայացուցին Վարդան



Ջօրավարի եւ նախարարներու վճռակամութիւնը՝ տէր կանգնելու հայոց լեզուին, հաւատքին եւ հայրենիքին մինչեւ իրենց արեան վերջին կաթիլը, չդաւաճանել հայեցի ինքնութեան այդ էական, նուիրական արժէքներուն:

Բժախնդրօրէն ընտրուած զգեստները եւ յարակից բեմական յարդարանքները, ինչպէս նաեւ յաջող դերակատարումը,

ներկաները փոխադրեցին 5-րդ դար՝ 451 թուական, ուր կը վճռուէր հայութեան եւ հայոց հայրենիքի ճակատագիրը:

«Հայաստան» բանաստեղծութիւնը ապրումով եւ յստակ առոգանութեամբ կատարեցին Զ. Դասարանի աշակերտները: Ապա Ա. եւ Բ. Միջնակարգի ուսանողները փոխանցեցին համառօտ պատմութիւնը Վարդանանց պատերազմի:

Առանձնապէս գնահատելի էր Բ. Մանկապարտէզի եւ Նախապատրաստականի փոքրիկներուն արտասանած «Վարդանանց»ը եւ «Վարդանանք»ը, մանկական շուրթերէն հնչած սրտաբուխ խանդավառութեամբ: Այնուհետեւ, յայտագիրը շարունակուեցաւ Բ.

Դասարանի՝ «Զօն Վարդանանց» եւ Ա. դասարանի՝ «Վարդանանց Տօն» եւ «Քաջն Վարդան» բանաստեղծութիւններու փայլուն արտասանութեամբ:

Օրուան խորհուրդին հետ սերտօրէն առնչակից, երկու սիրուած քերթուածներ՝ «Ո՞րն է պապօ մեր հայրենիք»ը եւ «Լուսաւորչի կանթեղը» հասկացողութեամբ արտասանեց Դ. Դասարանի աշակերտութիւնը: Գ. Դասարանը կատարեց «Քաջն Վարդան Մամիկոնեան»ի եւ Ե. դասարանը՝ «Մենք» քերթուածի խմբային արտասանութիւնը:

Միջնակարգի ուսանող Հրաչեայ Չաքարեան խոր ապրումով առանձինն արտասանեց Պարոյր Մելակի «Քիչ ենք, բայց հայ ենք» յայտնի քերթուածը, արժանանալով բոլորին ջերմ գնահատանքին:



Յայտագրի աւարտին, Վարդանանց նուիրուած եւ բարձր ժողովրդականութիւն վայելող երգերը՝ «Շաւարշան ի Քայլերգ»ը, «Կարմիր Վարդան»ը եւ «Լռեց Ամպերը» կատարուեցան վարժարանի երգչախումբին կողմէ, խմբավարութեանը Պրն Սարգիս Տեմիրճեանի եւ

դաշնակի ընկերակցութեամբ Երեցկին Թամար Հապէշեանի: Վերջին երգը՝ իր մենակատարութեամբ ծաղկեցուց Տէր Մումիկ Քինյ. Հապէշեան, յաւելեալ փայլ մը տալով հանդիսութեան:

Տնօրէնուհի Տիկ. Վերա Թահմազեան շնորհակալութեան ջերմ խօսքով գնահատեց հանդիսութեան կազմակերպիչները անուն առ անուն ու բոլոր մասնակիցները: Գեղեցիկ ծաղկեփունջով շնորհաւորեց Նարեկ վարժարաններու նախկին վաստակաւոր տնօրէն եւ այժմու Հոգաբարձութեան Ատենապետ Պրն. Վարդան Թաշճեանը, իր անուան տօնին առիթով, որ յայտնապէս յուզուած, յիշեց իր մանկական օրերը՝ Պէրոյթի Քառասուն Մանկանց դպրոցին մէջ, իր առաջին բեմական ելոյթը Վարդանանց հանդիսութեան, ապա՝ պատգամեց աշակերտներուն, ականջալուր ըլլալ մեծերու խրատներուն, չտարուիլ ժամանակակից կեղծ բարքերէն եւ հաւատարիմ մնալ հայեցի ինքնութեան արժէքներուն:

Վարուժան Արքեպիսկոպոս՝ հանդիսութեան աւարտին, բարձրօրէն գնահատեց տնօրէնութիւնը, ուսուցիչներն ու աշակերտութիւնը, յորդորելով աշակերտներուն մշտապէս հաւատարիմ մնալ Վարդանանց եւ Աւարայրի ոգիին, աւելցնելով որ Քաջն Վարդանը՝ 451 թուականէն մինչեւ այսօր 2014 թուականը, կը ծնի մէն մի հայուն մէջ, հայ աշակերտին, ուսուցչին ու ծնողին մէջ, մինչեւ այն ատեն որ կա՛ն հայ գիրը կարդացողն ու արտասանողը, կա՛յ հայ եկեղեցին, հայ դպրոցը....

«Պահպանիչ» աղօթքով վերջ գտաւ այս շատ տպաւորիչ եւ իմաստալից հանդիսութիւնը, որ նորովի ապրեցուց Աւարայրի ոգին, Վարդանանց խորհուրդը, պանծացուց եւ փառաւորեց



զանոնք: Նման հանդիսութիւններն ու ձեռնարկները, արդարեւ, մէյ մէկ յաղթանակ են հայ հոգիին եւ ոգիին, հայկականութեան՝ ազգային ձուլման եւ այլասերման տակաւ ահագնացող վտանգներուն դէմ յանդիման: Բոլորին ՎԱՐՁՔԸ՝ ԿԱՏԱՐ:

ԱԶԱՏ ԽՕՍՔ

Խմբագրական

ՀԱՅ ԿԻՆՃ՝ ԱԶԳԱՅԻՆ ՉԱՐԹՕՆՔԻ ԳՐԱԲԱԿԱՆ

Մարտ ամսուան մէջ, մեր մտածումները կ'երթան գերազանցօրէն Հայ Կնոջ, անոր ունեցած էական դերակատարութեան հայապահպանումի եւ հայակերտումի կարեւորագոյն բնագաւառներէն ներս: Որքան յատկանշական է Ջիվանիի գնահատականը այս մասին. «Հայ կանանց ենք պարտական, թէ որ հայ ենք մնացել...Մեր հաւատը, մեր լեզուն նրանցով է զարգացել, Հայ կնոջ սրբութիւնը ողջ ազգերն են իմացել»: Նոյնիմաստ դիպուկ խօսքեր ունի Ռաֆֆին. «Կինը մեզ տուեց լեզու, ազգութիւն, ամրապնդեց ընտանիքի բարոյական հիմունքները»:



Արդարեւ, արագ ակնարկ մը մեր պատմութեան էջերուն վրայ ի յայտ կը բերէ որ հայուհին եղած է ոգեշնչողն ու սնուցանողը ազգային իտէալներուն, արժէքներուն եւ տեսլականին: Անոնց արթուն պահապանը, անոնց համար մաքառողն ու պայքարողը, զանոնք սերունդէ-սերունդ փոխանցողը...:

Այդպէս էին 5-րդ դարու Աւարայրի ոգիով զինուած «Փափկասուն Տիկնայք Հայոց Աշխարհի», որոնք դարձան ամենէն հարազատ վկանները հայ կնոջ անպարտելի ոգիին, ազգային արժէքներու, ազգային գաղափարի եւ ինքնութեան գերագոյն հաւատարմութեան, անոնց հանդէպ անձնուրաց յանձնառութեան, եւ՝ ստանձնելով ամէն զոհողութիւն, գերադասեցին հայօրէն ազատ կեանքով ապրիլ, քան հեշտ ու յարմարաւէտ կեանքի գայթակղիչ պայմաններուն անձնատուր, զոհել ամենէն թանկը՝ հայեցիութիւնը, ազգային ինքնութիւնն ու արժէքները...:

Այդպէս էին մեր պատմութեան մեծ հայուհիները, որոնք իրենց կարեւոր մասնակցութիւնը բերին հայ քաղաքակրթութեան կերտումին: Վկայ՝ այն բազմաթիւ ձեռագիր մատեանները, որոնք ստեղծուեցին ու ծաղկեցին՝ հայոց թագուհիներու եւ ազնուագարմ տիկիներու ճիգերով...Վկայ՝ հայոց հողին վրայ սփռուած այն բազմաթիւ եկեղեցիներն ու պատմամշակութային կոթողները, որոնք կառուցուեցին եւ հայուհիներու նախաձեռնութեամբ:

Այդպէս էին 19-րդ դարու հայ կեանքի զարթօնքը իրագործած յառաջադէմ հայ կանայք՝ Սրբուհի Տիւսաբ, Սիպիլ, Զապէլ Եսայեան, Արշակունի Թեոդիկ եւ ուրիշներ, որոնք թողած ամէն հանգիստ, յանձն առին երթալ դէպի հայրենի գաւառները՝ հայ



գեղջկուհին լուսաւորելու սրբազան պարտականութեամբ, հիմնադրեցին «Ազգանուէր Հայուհեաց Միութիւնը», օրիորդաց դպրոցներ բացին հայկական գաւառներուն մէջ, խորապէս գիտակցելով որ «Ազգի մը սիրտը կինն է»...հետեւաբար՝ անոր առողջ, առոյգ բարախումբն են կախեալ ազգի լիարժէք կենսունակութիւնը, ազգի յառաջդիմութիւնն ու ազգային ազատագրումը...:

Տակաւին, հայ կինը եղած է ներշնչողն ու գործօն մասնակիցը հայ ազգային-ազատագրական պայքարին, Սօսէ մայրիկներու վսեմ օրինակով, զէն ի ձեռին պաշտպանելով հայրենի հողն ու օճախը, ազգային մեր սրբութիւնները: Եղեռնի ամէնէն սեւ, գեհենային օրերուն անգամ, հայ կինը՝ Տէր-Զօրի անապատներուն մէջ, անօթի ու ծարաւ, Հայոց Այբուբենը դրոշմած է անապատի աւազին վրայ իր կմախքացած մատներով, զայն յանձնելով գալիք սերունդին, որպէս ազգի փրկութեան գերագոյն երաշխիք ու գրաւական:

Կարելի է դեռ շատ երկարել շարքը նման յայտնի թէ անյայտ հայուհիներու, պատմութեան մէջ ցայտուն հետք թողած մեծանուններէն մինչեւ իրենց օճախին յոյսն ու լոյսը եղած ամէնէն խոնարհները, որոնք իրենց ազգային բարձր գիտակցութեամբ, ոգիով, արժանապատութեամբ եւ նուիրումով կրցան պահել՝ որդւոց-որդի, հայ հոգին ու ոգին կենդանի ու կենսունակ, հայ բառն ու բանը, հայ հոգեւոր-մշակութային արժէքները՝ անաղարտ, հայօրէն ապրելու արժանապատութիւնն ու կամքը՝ աներեր...: Որքան ճիշդ կը հնչեն Սիլվա Կապուտիկեանի տողերը. «Մայր, դարեր սուրբ են եղել քեզ համար գիր ու օճախ, Դու քո շնչով ես պահել մեր հին ոգին կենդանի»:

Ներկայիս համաշխարհայնացող, ազգային ինքնութիւն եւ մշակոյթ ջնջող աշխարհին մէջ, հայ կինը պիտի ստեղծագործաբար վերիմաստաւորէ իր հայապահպանման եւ հայակերտումի առաքելութիւնը, նոր շունչ ու ոգի ներդնէ, գիտակցութեան նոր որակ ձեռքբերէ, պայքարի նորոգ կամքով ու վճռակամութեամբ տոգորուի՝ կարենալ դիմակայելու համար՝ ազգի ու հայրենիքի ազատութեան եւ ինքնօրէն յարատեւման սպառնացող բազում եւ այլաբնոյթ վտանգները, որոնք տարբեր դիմակներու ետին թաքնուած, կը միտին ապահայացնելու, այսինքն ստրկացնելու մեզ...

Ազգ մը մեծ կ'ընծայուի վստահաբար, երբ անոր գաւակներուն ծնունդ ու սնունդ տուող առաջին եւ գերագոյն դաստիարակները՝ մայրերը, իրենց սեփական վարք ու բարքով, կենդանի օրինակով, կը բոցավառեն հասակ առնող նոր սերունդին մօտ՝ ազգային, բարոյական բարձրագոյն արժէքներու վրայ հիմնուած, ինքնօրէն ազատ ու արժանապատիւ կեանքի մը տենդը, ոգին, հրայրքը, հրեղէն գեղեցկութեան ճաշակը...մաքառումի եւ պայքարի կորովը:

Նման մայրերն ու հայուհիներն են որ պիտի դառնան ջահակիրները ազգային-հայրենական մեր երթին, բարձր բռնած հայոց լեզուի, հայ հոգեւոր-մշակութային արժէքներու մշտաշող լոյսը...: Հայուհիներ՝ որ պահանջատէրը ըլլան մը պատմական իրաւունքներուն եւ անժամանցելի Դատին: Հայուհիներ՝ որ անդուլ եւ աննահանջ ոգիով պայքարին ազգային ամէն դասալքութեան, օտարացման, ազգային-բարոյական եղծանումներուն դէմ: Հայուհիներ որ նորովի յայտնաբերեն ազգի ու հայրենիքի վերածնութեան շունչը...:

Յատկանշականօրէն, եւ վարակիչ օրինակի ոյժով, Զապէլ Եսայեան, մեծ հայուհին, 1914-ին Սկիւտարի մէջ, կը գրէր իր դասեր՝ Սոֆի Եսայեանին. « Պէտք է սարսափիլ միջակութենէն. այսինքն՝ անգոյն ու նուաստ դիրքէն: Յայտնի մարդ դառնալ, անձնական արժանիքներ ցուցաբերել, բարձր նպատակի ծառայել- ահա ասոնք պիտի ըլլան քու ձգտումներդ:....Ամենադժբախտ մարդը ան է, ով կը վարէ միջակ եւ անօգուտ կեանք մը, ներքուստ ափսոսալով որ վրիպեր է իր կոչումէն.....: ...Դուն կը պատկանիս ժողովուրդի մը, որ քանակապէս փոքր ըլլալով հանդերձ, մեծ է իր տառապանքով, մաքառումներով, յոյսերով: Դուն կոչուած ես մասնակցելու անոր պայքարին, անոր իղձերու իրականացման գործին»:

Կա՞յ աւելի ազգանուէր եւ ոգեշնչող խրատ եւ ուղեցոյց, որով հայ կինը, հայ մայրը պիտի դաստիարակէ նոր սերունդը այսօր եւ վաղը....Խրատ, որ Զապէլ Եսայեան ապրեցաւ սեփական հայրենանուէր կեանքի օրինակով ալ, անմնացորդ նուիրաբերելով իր ոյժերն ու կարելիութիւնները Հայաստանին ու հայութեան:

Այսօր, որքան կենսական, նոյնիսկ ճակատագրական կարիքը ունինք նման մեծ, յանձնառու, մաքառող ու պայքարող հայուհիներու, որոնք վստահաբար կան եւ դեռ գալու են՝ կենսագործելու ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵՐ ՄԵԾ ԶԱՐԹՕՆՔԸ, քանզի հայ կինն է վեներաբան խորհրդանիշը ազգի ու հայրենիքի յարատեւման եւ զարթօնքի:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ


Հարցազրոյց

Հրանդ Մաթեոսեան. «Մեր նախնին հիմա մենք ենք»

Էդիկ Բաղդասարեան

12 փետրուար, 2014

Հարցում – Երբ խօսում են գիւղացու մասին, չգիտես ինչու այդ գիւղացուն առանձին չեմ



կարողանում ընդունել, պատկերացնում եմ՝ գիւղացին, հողը և Աստուած: Յաջորդականութիւնը ճիշդ չեղաւ: Աստուած-գիւղացի-հող պէտք է ասէի: Հիմա խախտուել է այս համակարգը, չկայ Աստծոյ և գիւղացու, գիւղացու և հողի կապը:

Պատասխան – Մեր սահմաններից դուրս՝ մնացեալ աշխարհը բացառենք, Երկրի մասին չխօսենք կամ թէ չէ՝ փառք տանք Աստծուն, որ մենակ չենք մեր դժբախտութեան մէջ: Ռուս



գիւղացին նոյնպէս մեր վիճակում է: Մեզ սփոփենք այդքանով: Իսկապէս մեր վիճակը նախանձելի չէ, գոնէ 15 տոկոս ժողովուրդ չունենք գիւղում, գիւղացիութիւն չունենք: Եւ եղածի էլ տեղը տեղ չի՝ աշխարհը վստահութեան ու ճոխութեան շքերթի մէջ, դու քո աղքատ լանջերում դեռ քո բահ ու բրիչին ես: Հող չունես, անասուն չունես, ինքդ էլ երեկուայ յամատ մշակը չես: Բայց ծանր մի բան ասենք՝ ն՛ երկրաշարժը բարեբախտութիւն համարենք, որ Էսքան անգործիս համար աշխատանքի ճակատ բացեց, ն՛ այն բարեբախտութիւն համարենք, որ մեր սահմաններից երբ ոտքներս դուրս ենք դնում՝ մեր քթին խփում են: Ուրեմն դառնում ենք մեր աւերուած, մեր աղքատ հայրենիքին: Այս է Հայաստանը և ուրիշ Հայաստան չկայ:

Հարցում – Այդ միտքը մի առիթով էլ, կարծեմ, ասել էք: Եթէ չեմ սխալւում, այսպէս էք ասել, թէ մեր ժողովուրդը մենակ է թողնուած և այն իր լաւ կողմերն է բերում, բերում է հոգեւոր անկախութիւն, հոգեւոր ինքնավարութիւն: Հիմա դա բերուե՞լ է, թէ՞ պիտի բերուի:

Պատասխան – Պիտի բերուի: Շատ յստակ մի բան, այդուհանդերձ, այս ամռանը եղաւ: Նոյնիսկ բարիք համարենք այն, որ գազը անջատեցին: Տոյց տուեցին, թէ իրենք ով են, և մենք ով ենք, որ մենք մեր տեղը գտնենք: Մենք մեր տեղը գտնում ենք:

Հարցում – Կարծես թէ հակասեցիք մեր զրոյցի սկզբում Ձեր ասածին, որ մեզ նախ նիւթականն է պէտք, հիմա էլ ասում էք՝ գազը կտրեցին, դա բարիք է, այսինքն նիւթականը կտրեցին, մենք մեր հոգեւոր անկախութեամբ պիտի դիմակայենք:

Պատասխան – Անվերապահ պատասխանը արի միասին գտնենք: Պաշարուած միջնաբերդում կարգուկանոն և հոգեւոր, մտաւոր, մարմնաւոր կարողութիւնների ճիգ է լինում, իսկ մենք հենց պաշարուած միջնաբերդ ենք: Կամ թոյլ կը լինենք, ու համաճարակը մեզ կը խժոխի, կամ խելացի կը լինենք ու կը յաղթահարենք: Կարծում եմ, մէկ անգամ չենք յաղթել և դարձեալ կ'ապրենք: Վաղուայ մեր հացը մենք ենք ցանելու, մեր անասունը մենք ենք պահելու, մեր հողի ն՛ մշակը, ն՛ տէրը մենք ենք լինելու:

Հարցում – Հասարակութեան հոգեվիճակի վրայ, Ձեր կարծիքով, ի՞նչ ազդեցութիւն կարող է ունենալ գեղարուեստական խօսքը: Արուեստի, գրականութեան մարդը ինչքանով է պատասխանատու ազգի հետ կատարուածի համար:

Պատասխան – Քո չափ ես էլ այն մեծ, ճառագող, ժողովրդին լաւատեսութեան բերող խօսքի կարիքը զգում եմ: Դա այսօր, այս պահին շատ աւելի քաղաքական առաջնորդների գործն է: Մեր գրականութիւնը, մեր Բանը ինչ որ զօրել է, տուել է, և հիմա իր արձագանգին է սպասում: Քաղաքական առաջնորդի, մեզ լաւատեսութեամբ համակող, ազգը հաւաքող այդ առաջնորդի կարիքը ես զգում եմ: Ուզում ես Քրիստոս կոչիր այդ առաջնորդին, ուզում ես Անդրանիկ զօրավար... որ ծղրտար ու առաջնորդէր:

Հարցում – Այսինքն այդ խօսքը գրականութեան մարդը չպիտի ասի:

Պատասխան – Քիչ առաջ կողմնակիօրէն այդ մասին խօսեցինք. որպէսզի ճեֆերսոնը ծնուէր՝ հարկաւոր էր, որ Շէքսպիրը լինէր: Ճեֆերսոնը Շէքսպիրի որդին է: Մեր



գրականութեան և արուեստի պարտականութիւնը պիտի եղած լինէր այն, որ ստեղծած լինէր այն մթնոլորտը, որտեղ քաղաքական առաջնորդի կերպարը բարձրանար, միջավայրը յազգեցրած լինէր այն խօսքով, որ քաղաքական առաջնորդի բերանից որպէս Աստուծո Բան էր հնչելու: Ինչքանով ենք թերացել, ինչքան ենք մենք տուել՝ իրենք չեն լսել, ինչքանով ենք իրենք և մենք մեր ազգային հայ կեանքով ապրում... ուրիշների գորեղ ձայները ինչքանով չեն խանգարում մեզ լսել մեր իսկ ձայնը:

Հարցում – Ի վերջոյ ստացում է, որ այդ խօսքը պէտք է լինի ժողովրդի խօսքը, և ժողովուրդը պիտի օգնի, վեր հանի իր այդ խօսքը ասողին:

Պատասխան – Մշակոյթ-ժողովուրդ միասնօրէն պիտի ստեղծած լինէին այն մթնոլորտը, որտեղից, թուում է, որպէս Աստուծոյ խօսք, պիտի քաղաքական գործիչը վերցնէր ու վերադարձնէր ժողովրդին:

Հարցում – Ասածս նորից է բերելու մեր զրոյցի սկիզբը՝ բարոյագրկմանը, անհատի կործանման այդ գաղափարին: Մի բարի գործ է արւում՝ քան ու գործ թողած դրա շուրջն ենք սկսում խօսել, ինչը որ դարեր շարունակ բնական էր, այսօր ուղտի մէջքին դրած ման ենք տալիս՝ «Տեսէք, տեսէք, էս էն երեխային ժպտացող Ձմեռ պապին է»:

Պատասխան – Ռուսների արտայայտութեամբ՝ անընդհատ պտըտում ենք մերձիմօտ: Մերձիմօտ ենք անում, բայց չենք ընկնում բուն միջուկի վրայ: Դրանում էս իմ մեղքն ունեմ, որովհետև անընդհատ, այդ խոհերը իմ մէջ լինելով իսկ, սպառեցի կամ ուրիշի միջոցով արեցի, էս իմ ձեռքով չգրեցի, կամ խակ-խակ, դեռեւս միտքը չհասունացած ծախսեցի, մսխեցի ինձ: Բայց դրա կարիքը էս զգում եմ: Պիտի ասուի՝ չծախսուելով, չմսխուելով: Այս նոյն գաղափարը, եթէ հետեւել էս, հեռուստատեսութեամբ, մամուլում (մեր այսօրուայ մամուլն էլ, փառք Աստուծոյ, բոլորը համարեա ճշմարիտ և ճշմարտանման են) բոլորը մսխում են, մաշում են այդ գլխաւոր գաղափարը, և գլխաւոր բանաձեւը կարծես թէ չի գտնուում: Ես նոյնպէս զգում եմ, որ էս էլ Մովսէսի այդ խօսքին սպասում եմ: Մովսէսը Միսայի լեռ աղմուկ տարաւ և ձայն բերեց: Մեզանում էլ առայժմ այս ամբողջը դեռ աղմուկ է՝ յստակ բանաձեւում չստացած: Ձայն է պէտք, էս դրա կարիքը զգում եմ: Նոյնիսկ ինձ եմ յանցագործ տեսնում, որ ահա էս չուշեցի մի ուրիշին, որ իմ միտքը նրա համար շարունակելի մի բան թուար, և ինքը կարողանար ասել:

Հարցում – Ինչո՞ւ այսօր այսպիսի ձգտում կայ դէպի եկեղեցին, դէպի զանազան դաւանանքները: Գուցէ նաեւ հենց այդ խօսքի պակասն է պատճառը, թէ՞ գնում ենք դէպի մեր ակունքները:

Պատասխան – Մենք ոչ խրախուսելու, ոչ էլ խանգարելու ենք ժողովրդի այդ հոսքը: Դա ուխտագնացութիւն է երկնուայ արգելուած գօտի, վաղուայ օրով շատ բան իր տեղը կ'ընկնի, և այդ հոսքը այդպիսի չափեր չի ունենայ: Մշակոյթի մէջ կրօնը իր արժանի տեղը կը գտնի, և վերջ: Նեղ ժամանակներում հոսքը դէպի Աստուծոյ ոտը միշտ եղել է:



Հարցում – Չգիտեմ ինչու, այն տպաւորութիւնն ունեմ, որ երբ խօսք է գնում Աստծոյ, «Աստուածաշնչի» մասին, խուսափում էք խօսել:

Պատասխան – Ես մի անձնական գուտ իմ թերութիւնն ունեմ, երբ տեսնում եմ, որ բոլորն են մի բանի մասին խօսում՝ ես լռում եմ: Իսկ երբ բոլորի համար արգելուած է՝ ես այն առաջին կտրիճն եմ, որ ոտը առաջ է գցում: Դա երէկ կը վերաբերուէր Դաշնակցութեանը՝ երբ արգելուած, հալածուող կուսակցութիւն էր (իմ բոլոր քայլերը նրան բացայայտելը, նրան թոյլատրելը, նրա իրաւունքները արձարծելն էր... հիմա բոլորն այդ են ասում, ես այդտեղ կարծես թէ այլեւս անելիք չունեմ), թէ Աստծուն՝ միեւնոյն է: Աստծու հարցին ես նայում եմ որպէս մշակութային հարցի: Մեր յանձնաժողովում էլ խօսուում է այդ մասին, առաջարկներ են լինում՝ Հայաստանը դարձեալ միջնադար նետել: Բոլորի մեջ Լեւոն Շանթ կայ: Բայց ինքը՝ Շանթը տրամայի իրացումով («Հին Աստուածներ») ազատուում էր իր նոստալգիայից, անցեալի իր կարօտից, այսօրուանները գրական այդ շնորհքը չունեն և իրական ժողովրդով են ուզում խաղալ միջնադարի ու Աստծու մասին իրենց «հին աստուածները»: Դա ձախաւերութիւն է: Իսկ եթէ ասենք այդ մարզում մենք անելիք ունենք, ապա ուղղակի այդ մշակոյթը որպէս դասաւանդուող առարկայ դարձնում երեխաներին տալ– կրօնի, կրօնների պատմութիւն– թող լայնախոհ երեխաներ ունենանք: Այդքան միայն՝ որպէս մշակոյթի պատմութիւն:

Հարցում – Ձեր ծնողները հաւատացեա՞լ են:

Պատասխան – Իմ ծնողները գիւղացի հայ մարդիկ են՝ մի օր հաւատացեալ են, երկու օր՝ ոչ:

Հարցում – Մօտ ապագայում ի՞նչ էք ներկայացնելու ընթերցողներին:

Պատասխան – Իմ անձի առաջ իմ անելիքն այն է լինելու, որ խորհրդարանից զատուեմ, մեկուսանամ որեւէ տեղ, ընտանիքս մի վեց ամսուայ հացով ապահովեմ և իսկապէս կարողանամ ուղղակի մի ամիս մաքուր լռութիւնների տրուել, որպէսզի մոռանամ այս ամբողջը և կարողանամ ընկնել այն աշխարհը, որտեղ էի մինչեւ այս թոհուբոհը: Դա իսկապէս աշխարհ էր, որտեղ ընկնելու համար իսկապէս արժանի ջանք է պետք:

«Լուսաւորիչ», 04.12.1990 թ.

Գրական-Մշակութային

ՀԱՅԱՆՈՒԷՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԽԱՉԱՏՈՐ ԼԵՒՈՆԵԱՆԻ «ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱԾԽԱՐՀԸ»

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցին դէմ յանդիման, ընթերցողին կը մատուցուի ազգային ինքնաճանաչման հրաւիրող նոր աշխատութիւն մը՝ Խաչատուր Լեւոնեանի «Վան-Վասպուրական Աշխարհը» հատորը, զոր ջանասիրաբար կազմած, խմբագրած եւ ծանօթագրած է՝ վաստակաւոր խմբագիր, կրթական մշակ, բազմաթիւ հատորներու եւ յօդուածներու հեղինակ՝ Փրոֆ. Դոկտ. Երուանդ Հ. Քասունի, 2013-ին, Պէյրութի մէջ:



Գիրք՝ մը այս, որ կը կարդացուի մեծ հետաքրքրութեամբ եւ նոր լոյս կը սփռէ՝ պատմական Հայաստանի Վան-Վասպուրական աշխարհին վրայ, որ հայ ժողովուրդի քաղաքակրթութեան օրրան է եղած հնագոյն ժամանակներէն մինչեւ 20-րդ դարու առաջին երկու տասնամեակներու աւարտը: Հարուստ՝ իր «ռազմաքաղաքական փառքով, եկեղեցական, մշակութային ու տնտեսական ժառանգութեամբ, իր Միերի Դուռով եւ Աղթամարի Մբ. Խաչով, Նարեկայ Վանքով ու Նարեկեան աղօթքով, իր Այգեստանով եւ ինքնապաշտպանութեան

հերոսապատումներով», ինչպէս կը գրէ Դոկտ. Երուանդ Քասունի՝ իր Ներածական խօսքին մէջ:

Հատորին մէջ տեղ գտած Խաչատուր Լեւոնեանի աշխատասիրութիւնները կը վկայեն, որ ան իր ժողովուրդին նուիրուած հայ մարդն է, որ՝ որպէս պատմագրող, տեղագրող, մայրենի լեզուի, դիցաբանական ժառանգութեանց եւ ժողովրդական աւանդութեանց առեղծուածները պարզաբանող, կը միտի ինքնաճանաչման հրաւիրելու իր ժողովուրդը, խորապէս մտահոգուած ըլլալով անոր տագնապալի առօրեայով եւ ապագայի անորոշութեամբ...: Ի գուր չէ որ Մաղաքիա Արք. Օրմանեան այսպէս կը գրէ Խաչատուր Լեւոնեանի մասին. «Վանի գրական կորուստներու մէջ առաջին տեղ կը գրաւէ Խաչատուր Լեւոնեանը...: Անխոնջ, յարատեւ եւ համբերատար աշխատող մըն էր Լեւոնեանը, որ 30 տարի հայ դպրոցական ու գրական ասպարէզի մէջ վատնեց իր եռանդը»:

Ընթերցողը կը փշաքաղուի, կարդալով պատմագրող Խաչատուր Լեւոնեանի նկարագրութիւնները՝ այլազան եւ այլաբնոյթ հարկերու եւ տուրքերու տակ ճգնուած հայ ժողովուրդի իրավիճակին մասին: «Թուրք կը զարնէ, Քիւրտ կը զարնէ, Չերքէզ կը զարնէ իր գլխուն, եւ եթէ ողջ տեղ մը մնալու ըլլայ, այն ալ կառավարութիւնն իր հարուածներով կը վիրաւորէ...Շատ անգամ կը ստիպուի իր շարժական եւ անշարժ կալուածները գրաւի տակ դնելով թուրք, քիւրտ եւ հայ պուրժուաններու մօտ, յաւէտ 20, 30, 40 առ հարիւր տոկոսով դրամ փոխ կ'առնէ անոնցմէ...Մէյ մըն ալ կը տեսնէ որ տարիներու ընթացքին մէջ



կրկնապատկուած ու եռապատկուած է այն պարտքը...ա՛լ կը ստիպուի ձեռքէ հանել իր բոլոր շարժական եւ անշարժ կալուածները եւ պանդխտութեան ցուպը ձեռքն առած՝ պանդխտութեան կը դիմէ այն դիզուած պարտքերը վճարելու թեականութեամբ»:

Որքա՛ն լուսաբանող բնոյթ ունին Խաչատուր Լեւոնեանի պատմագրական ակնարկները հայ-քիւրտ յարաբերութեանց մասին: Քիւրտերու բարբարոսական շարունակական շահատակութիւնները, արդարեւ, պատճառ ալ կ'ըլլային որ հայ ազգէն ստուար մաս մը անոնց միանար ազգութեամբ ու կրօնով, եւ ան կը թուէ այդ քրտացած հայ ցեղերու անունները մէկ առ մէկ, ինչ որ ցոյց կու տայ Մէվլանգատէներու, որ «հայերը չեն որ քիւրտերէն ծագած են, այլ քիւրտերն են որ մեծ մասամբ գաղթած են հայերէն...»:

Հոգեմտաւոր իսկական վայելք է, անկասկած, կարդալ Խաչատուր Լեւոնեանի տեղագրական ակնարկները, բանաստեղծական շունչով յագեցած, երբ ան ուխտագնացութեան կ'երթայ Վան-Վասպուրական աշխարհի վանքերն ու եկեղեցիները, ի մասնաւորի՝ Սուրբ Նարեկացիի աղօթարանը: «Վայր բանաստեղծական, որ ցերեկը՝ տարբեր եւ գիշերը տարբեր կախարդանքներ ունի: Այո, ցերեկ ատեն կը դիւթուի մարդ, դիտելով լայնածաւալ հորիզոնն որ կարծես կ'անէանայ հեռուն, հեռո՛ւն եղող մշուշապատ սարի մը վրայ...Վարը, ընդարձակ դաշտին վրայ ալ կ'երեւի Նարեկայ Վանքն իր քառեակ գմբէթներով, որ կարծես թէ թխտող հաւու մը պէս իր շուրջն առած է գիւղին տունները, փոքրիկ ծիտերու նման, շրջապատուած նաեւ կանաչագեղ պուրակներով եւ ձեւաւոր արտերով...Արդէն մէկ կողմէն ալ Վանայ կապուտակ եւ ծիծաղկոտ ծովակը, կարծես հմայուած սոյն բնական հանդիսաւորութենէն, ինծիղի ու ծիծաղի ծայքեր կը ձեւացնէ իր պսպղուն երեսին վրայ»: Երեւակայութեան թռիչքով, ընթերցողը պահ մը վերացած կը փոխադրուի Նարեկացիի «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» աղօթքի երկնուած վայրը, ուր «կարծես պահ մը Աստուած կը մարդանայ եւ մարդը կ'աստուածանայ...»:

Հետաքրքրական եւ ուսանելի են Խաչատուր Լեւոնեանի «Դիցաբանական Նշմարներ»ը, որոնք հեթանոսական անցեալէն մնացած դիցաբանական փշրանքներ են, որոնք կ'ապրին յատկապէս բառ-խօսքերու մէջ: Նոյնքան ուսանելի են՝ Ժողովրդական Տօներու նուիրուած իր ուսումնասիրութիւնները, ինչպիսիք են՝ Առաջաւորաց Պահքի, Տերնդեզի, Համբարձումի, Վարդավառի Տօները, որոնք՝ իրենց հեթանոսական, դիցաբանական, կրօնական, պատմական ծայքերու բացայայտումով, կը զարմացնեն ընթերցողը: Նշեալ տօներու մասին գրութիւնները առաւել հետաքրքրական կը դառնան՝ մէջբերուած երգ-խօսք ու բանով, որոնք ստեղծուէր են տուեալ տօներուն առթիւ: Հասկնալի կը դառնայ որ հեղինակը կը հաւատայ այս տօներու աւանդական արժէքին ու գաղտնի ոյժին՝ ժողովուրդը իր արմատներուն կապուած պահելու գծով, քանզի տօնը «կը յատկանշուի հին հին դարերէն մնացած իսկատիպ սովորութիւններով եւ արարքներով՝ ի գործ դրուած մեր ներքին զաւառներուն մէջ իբրեւ հնութեան յետին իլեակներ, որոնք հետզհետէ մոռցուելու վրայ են, տեղի տալով Արեւմուտքէն փչած այն հովին առաջ, որ լուսաւորութիւն կամ քաղաքակրթութիւն կը կոչուի.....Ափսոս»:



Ընթերցողը մանրամասնութեամբ կը ծանօթանայ Վան-Վասպուրական Աշխարհի հայ դպրոցի պատմութեան, հանգրուան առ հանգրուան, առկայ խնդիրներու եւ դժուարութեանց յաղթահարման, մանաւանդ երբ ժողովուրդէն ոմանք եկեղեցիի «կանթեղի եւ մովի լուսաւորութիւնը նախադաս կը համարեն մտքի լուսաւորութենէն»...: Հեղինակը կը համարէ, որ 1908-էն ետք, «նոր բէթիմի սկսումէն»՝ սկիզբ կ'առնէ հայ կրթական ոսկեդարը, նոր ոյժ կը տրուի դպրոցներուն հետեւողական կերպով եւ մանկավարժական նորանոր մեթոտներու կիրառումով: Եղած դպրոցներուն վրայ կ'աւելնայ նաեւ Վարժապետանոց մը, ՀԲԸ Միութեան ձեռնտութեամբ եւ Վանի հայ ժողովուրդին մասնակցութեամբ: Այդ շրջանին, կրթական գործին կը միանայ նաեւ մամուլի գործը: Ռահվիրան է Խրիմեան Հայրիկ: Խաչատուր Լեւոնեան մէկ առ մէկ կը թուէ Վանի մէջ գործող ազգային եւ օտար դպրոցներու թիւը, որոնց վրայ կ'աւելնան 45 նախակրթարաններ Աղթամարի թեմին մէջ: Այս շրջանին, տեղի կ'ունենան թատերական ներկայացումներ, գրական եւ երաժշտական երեկոյթներ, դասախօսութիւններ, կը բացուին ընթերցարաններ, կը հիմնուին միութիւններ, ընկերութիւններ...: Ազգային գիտակցութեան զարթօնք մըն է, որ ծայր կ'առնէ, շնորհիւ ի մասնաւորի հայ դպրոցին, հայ տիպ ու տպագրութեան: Խաչատուր Լեւոնեան կ'եզրակացնէ. «Արդ՝ պէտք է ամենայն վստահութեամբ ըսել ուրեմն, քանի որ կ'ապրի հայ լեզուն եւ անոր տառն ու դպրութիւնը՝ հայութեան մէջ, հայ ազգը չպիտի մեռնի երբեք, այլ պիտի քալէ միշտ ժամանակին հետ եւ իր անկապտելի տեղը գրաւէ ազգերու մեծ ընտանիքին մէջ»:

Իր մտորումներուն մէջ, Խաչատուր Լեւոնեան կը յստակէ իր տեսակէտը, որ մարդ էակը ունի երեք գլխաւոր մասեր՝ մարմին, հոգի եւ միտք, եւ անոնց վերաբերեալ հաւասարակշռեալ հոգատարութեամբ միայն է կատարեալ մարդ: Ան որոշապէս կը հաւատայ որ « երբ չգոհացուին այդ երբեակ մասերուն եռակի պահանջները, եւ Հայն իբրեւ հերձուած մարդկային երրորդութեան դէմ ապրելու ըլլայ սոսկ իբր մարմին, լքելով հոգին ու միտքը, պիտի դառնայ մարդ-անասուն: Բայց ընդհակառակն, երբ ապրի եւ գործէ իբր մարմին եւ միտք միայն, ի սպառ մերժելով հոգեկանը, այն ատեն ալ պիտի դառնայ մարդ-սատանայ: Ահա երկու հակառակ ծայրեր՝ որոնք միշտ աննպաստ պիտի ըլլան մարդուն, նամանաւանդ հայ մարդուն կատարելութեան»: Այսինքն, մարդկային երրորդութեան իւրաքանչիւր մասին կամ մասերուն ծայրայեղական մոլութիւնը, դորս կը մղէ մարդը կատարելութեան հասցնող ուղիէն:

Խաչատուր Լեւոնեան կը հաւատայ որ «կեանքն իրական է, իսկ մահը՝ երեւութական» եւ «ինչպէս արեւամուտը՝ արեւածագին, նոյնպէս մահը կեանքին անցման շրջանն է: «Իմաստուն է Աստուած: Եւ երբ իմաստուն է ան», ուրեմն մահը աննպատակ չէ:

Իր մտորումներու բաժնին մէջ, հեղինակը չի մոռնար իր երախտիքի խօսքը ըսելու Տր. Ռէնոլտսի, որ «40 երկար տարիներէ ի վեր կուրծք տուած ամէն ներքին եւ արտաքին վտանգներուն ու նեղութիւններուն...բարեբարող ձեռքը հանդիսացաւ Վանի համայնքին, իբրեւ պաշտօնեայ Աւետարանի, իբրեւ բժիշկ, իբրեւ ուսուցիչ ու իբրեւ աղքատներու եւ որբերու ինամակալ, ազատելով շատ մը կեանքեր ստոյգ մահէ թէ՛ բարոյապէս եւ թէ՛ միանգամայն ֆիզիքապէս ու մտաւորապէս»:



Գիրքի ընթերցումով, մեր հայեացքին դիմաց կը յառնու Խաչատուր Լեւոնեան՝ գլխագիր մարդն ու հայր, իրա՛ւ քրիստոնեան ու սրտացաւ մտաւորականը, որ կ'ապրի իր ժողովուրդի ճակատագրով, խնդիրներով ու տագնապներով...: Մարդ՝ որ իր ուղն ու ծուծով, իր բոլոր բջիջներով կ'ապուած է հայրենի իր հող ու ջուրին, քար ու ժայռին, ձեռակերտ եւ անձեռակերտ բեկորներուն, հայրենի ժառանգութեան մէն մի նշխարին...: Մարդ՝ որ իր ամբողջ կեանքը յայտնապէս նուիրաբերած է հայ գիր ու տառին, հայ նոր սերունդի պատրաստութեան սրբազան գործին եւ ի մասնաւորի՝ իր ժողովուրդին ճանչցնելու իր տոհմիկ ասանդութիւնները, սօներն ու սօնակատարութիւնները, բարբառներն ու ասոյթները, ազգային-հայրենական ժառանգութիւնը, որպէսզի՝ որդւոց-որդի, անաղարտ ու անխաթար պահպանուին անոնք: Ընթերցողը ոչ միայն կը վարակուի Խաչատուր Լեւոնեանի անմնացորդ հայրենասիրութեամբ, այլեւ արխիւային անգին ծանօթութիւններով կը հարստացնէ իր հայագիտութիւնը՝ Վան-Վասպուրական աշխարհին մասին մասնաւորապէս, եւ անով, նաեւ՝ ազգային իր ինքնաճանաչումը:

Ընթերցողին շնորհակալութեան եւ երախտագիտութեան մեծ բաժինը կ'երթայ՝ հատորը կ'ազմող, խմբագրող եւ ծանօթագրող, անխոնջ ու նուիրեալ Դոկտ. Երուանդ Հ. Քասունիի, որուն բժախնդիր եւ բարեխիղճ պրպտումներուն եւ տքնաջան աշխատանքին շնորհիւ՝ լոյսին է բերուած նահատակ մտաւորականը իր հարուստ եւ հարստացնող ժառանգութեամբ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Յօդուածներ

Արժէքաւոր Հրատարակութիւն մը 100-ամեակի Սեմին

THE TIMES OF THE ARMENIAN GENOCIDE


Reports in the British Press V. 1, V. 2. 1914-1923, Beirut

Բանաբաղութեամբ եւ Խմբագրութեամբ Քաթիա Մինաս

Փելթեքեանի

Դոկտ. Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս, 3 Փետրուար 2014

Ներկայացուող զոյգ հատորներով լաւագոյն ծառայութիւնը կը մատուցուի Հայկական Ցեղասպանութեամբ հետաքրքրուած իւրաքանչիւր ուսանողի, պատմաբանի ու դիւանագետի: Ահաւասիկ եւս երկու հատոր, ուր ամփոփուած են արեւմտաեւրոպական մամուլէն անգլիական պատկառելի թերթերու մէջ ատենին, օրը օրին լոյս տեսած այն հարիւրաւոր հաղորդագրութիւններն ու տեղեկատուութիւնները, որոնք անհերքելի



ապացոյցները կը հանդիսանան այն ահաւոր, մինչ այդ չտեսնուած մարդկութեան դէմ գործադրուած ոճիրներէն ամէնէն ահաւորին՝ Հայկական Ցեղասպանութեան, որուն ենթարկուեցաւ իր բնօրրանին մէջ ապրող ու ստեղծագործող հայ ժողովուրդը:

Հեղինակը տակաւին 2000 թուականին ուսումնասիրողներու տրամադրութեան տակ դրած էր *Heralding of the Armenian Genocide: Reports in The Halifax Herald, 1894-1922* ժողովածուն, ուր վերոյիշեալ թերթին աշխատակիցները իրենց հասած սարսափելի դէպքերու ծաւալումներու մասին դրկուած հարիւրաւոր լուրերով ու թղթակցութիւններով կ'արձագանգէին Օսմանեան Թուրքիոյ տարածքին ընթացք առած այն ահաւոր խժոժութիւններուն մասին, որ հետագային կոչուեցաւ դարուս առաջին

ցեղասպանութիւնը:

Երբ կ'ըսենք տքնանքով, յամառ ու հետեւողական աշխատանքով մէջտեղ եկած հրատարակութիւն մը՝ պէտք է մեր աչքին առջեւ ունենանք ներկայացուող զոյգ հատորները: 976 մեծադիր էջերու մէջ 1038 թղթակցութիւն եւ հաղորդագրութիւն, բոլորը պատճէնահանուած, կու գան վկայելու հայուն գողգոթային մասին՝ 1914-էն 1923 եւ ասոնք տակաւին միայն *The Times*, *The Sunday Times* եւ *The Manchester Guardian* թերթերու մէջ լոյս տեսածներն են:

Հեղինակին առաջնային նպատակը եղած է ընթերցող եւ ուսումնասէր լայն շրջանակի մը սեղանին դնել Ա. Համաշխարհային Պատերազմին նախորդող ամիսներէն սկսեալ մինչեւ 1923 թուականի Լոզանի դաշնագիրը երկարող տարիներու ժամանակագրութիւնը, որուն մէջ ներառուած են ոչ միայն ջարդերու, տեղահանութիւններու, կողոպուտներու, առեւանգումներու սահմոկեցուցիչ նկարագրութիւնները, այլեւ Բրիտանական Կայսրութեան խորհրդարանին մէջ եղած աշխոյժ քննարկումները, սրտցաւ անդամներու կոչերը օգնութեան փութալու պատերազմի ու ցեղասպանութեան արհաւիրքներուն ենթարկուող հայութեան եւ ինչու չէ՞ նաեւ ապահով օրրան մը ապահովելու հայ ժողովուրդին համար:

Այսպէս օրնակ *The Manchester Guardian* թերթի 1915-ի Ապրիլ 28-ի թիւին մէջ, Հայաստանի Ապագան վերնագրով Նամակ Խմբագրիմբաժնին մէջ A. S. S. անունով սրտցաւ անզլիացի մը կը գրէ գովելով Սըր Ուիլիամ Ռամզայի (Sir William Ramsay) տեսակէտը, որ կ'առնչուի Թուրքիոյ ապագային: Սըր Ռամզայ կարեւոր կը նկատէր նախաձեռնող եւ գործարար ոգի ունեցող հայ ազգին համար բնօրրան մը ստեղծելու անհրաժեշտութիւնը: Նամակին հեղինակը կը պնդէ որ Անտանտի երկիրներու հսկողութեան տակ դրուելիք վեց վիլայէթներու (90.000քառ. Բմ) տարածութեան վրայ պէտք է աւելցնել նաեւ Կիլիկիան: (Էջ 45)

Հետաքրքրական փաստ է այն իրողութիւնը, որ շատ յաճախ Հայաստանի եւ հայ ժողովուրդի հետ առնչուող լուրերը տպուած են զոյգ թերթերու առաջին էջին վրայ, ինչ որ ցոյց կու տայ մեր կացութեան հրատապութիւնը Անզլիոյ համար: Յիշեցնենք թէ *The Times*-ը 18-րդ դարու



վերջերէն տակաւին համբաւ ունէր որպէս լուրերը հարազատ կերպով փոխանցող թերթ, որ տասնեակներով թղթակիցներ ունէր ամբողջ Օսմանեան կայսրութեան տարածքին:

Զարմանալի պիտի գտնեն ոմանք Անգլիական պատկան մարմիններու հետաքրքրութիւնները եւ դրական վերաբերմունքի փաստերը հայոց հանդէպ (թէեւ այդ տրամադրութիւնները հայ ժողովուրդին ջրաղացին ջուր չլեցուցին երբեւիցէ):

Անգլիական մամուլին մէջ յաճախ կը յիշուին նաեւ հայերէն վրէժխնդիր ըլլալու դէպքեր, թէեւ կայսրութեան գլուխը անցած Իթթիհատականները ջանք չեն ինչայեր թուրքերուն եւ աշխարհին համոզելու թէ հայեր եւ Օսմանեան բանակին մէջ ծառայող (հաւատարիմ) հայ քաղաքացիներ իբր կը գործակցէին կամ միտք ունէին գործակցիլ թշնամիին հետ: Այսպէս, 1917 Թուականի Ապրիլ 11-ին թիւին մէջ թղթակիցը կը գրէ թէ Օսմանեան բանակը մինչ անկազմակերպ կը նահանջէր դէպի Անկորա (Անքարա) եւ ռուսական զօրքերուն ձեռքը կ'անցներ Երզնկան, իսկ քայգերական բանակները գրեթէ ոչինչ կընէին դրութիւնը փրկելու ուղղութեամբ, թուրք հրամանատարութեան կարգադրութեամբ կ'ոչնչացուին 1700 հայ զինուորներ եւ վարպետ արհեստաւորներ, որոնք կ'աշխատէին արհեստանոցներու եւ ճամբաներու վրայ: (էջ 222):

Անգլիա լուրջ արշաւ կազմակերպուած է հայ գաղթականներուն օգնութեան հասնելու ուղղութեամբ: Այս մասին կան առատ տեղեկութիւններ, որոնք լոյսին կը հանեն ազնուասիրտ անգլուիներու տարած անսակարկ նուիրումին փաստերը: Փայլուն օրինակ մըն է Օրդ. Էմիլի Ճ. Ռոպինսընի պարագան: Ան Պատուոյ Քարտուղարուին էր Հայկական Կարմիր Խաչի եւ Գաղթականներու Հիմնադրամին Լոնտոնի մէջ: Օրդ. Է. Ռոպինսըն 25 Ապրիլ 1917-ի թիւին մէջ սրտառու կոչ կընէ The Manchester Guardian-ի մէջ որ չէքերն ու այլ օգնութիւնները ղրկել նշուած հասցէին: (էջ 223):

Ա. Եւ Բ. Հատորները կը սկսին Քաթիա Մ. Փելթեքեանի նախաբանով, որուն կը յաջորդէ հայ ժողովուրդի երեքհազարամեայ պատմութեան ժամանակագրութիւնը՝ 883Ք. Ա. մինչեւ 29 Հոկտ. 1923 թիւը, երբ Մուսթաֆա Քեմալ հայերէն եւ այլ փոքրամասնութիւններէն զաւթուած տարածքներու վրայ յայտարարեց Թուրքոյ Հանրապետութեան հիմնադրութիւնը: Հատորները օժտուած են նաեւ մատենագիտական ցանկով:

Տարիներու քրտնաջան արդիւնքի մը առջեւ կը գտնուինք ըսելը ամբողջական պատկերը չի տար ներկայացուող երկու հատորներուն, որոնց լոյս ընծայման մէջ ոչ միայն իր ժամանակը այլեւ նիւթական աղբիւրները չէ զլացած հեղինակը, որուն լոկ փափաքը եղած է թշնամիին հետ խօսիլ փաստերու լեզուով՝ յիշուի լուրջ անձնական ներդրում մը հայկական գեղասպանագիտութեան բնագաւառէն ներս՝ 100 ամեակի սեմին:

Դոկտ. Մինաս Գոճայեան

Լոս Անճելըս

Տեսակէտ

Ցեղասպանութեան Չոհերու Սրբացման Հարցը Գեորգ Եազրճեան,


Երեւան,

30 Յունուար 2014 Արժ.

Դոկտ. Արէլ Քինյ. Մանուկեան,

Կարդացի Ձեր «Հայ Եկեղեցին Եւ Մեծ Եղեռնի Չոհերու Սրբադասման Հարցը» գրքոյկը, գոր բարեհաճած էիք նուաստիս ընծայել գեղեցիկ մակագրութեամբ մը՝ ի բացակայութեան անձիս: Զայն կարդացի, ինչպէս կ'ըսեն, գրեթէ մէկ շունչով, յընթացս կատարելով որոշակի ծանօթագրումներ: Վերջիններուս հիման վրայ ալ կը շարադրեմ տպաւորութիւններս եւ դատումներս պարունակող այս գրութիւնը:

Զմոռցած, յայտնեմ, որ զիս յուզեց Ձեր բարձր գնահատականը Հոգելոյս Զարեհ Ս. Արք. Ազնաւորեանին, իսկապէս սրբակենցաղ ու բազմավաստակ, իր անձը անմնացորդ



նուիրումով ի սպաս Եկեղեցւոյ եւ Ազգին ընծայաբերած իսկական հոգեւորականին: Եթէ մեր Եկեղեցին վերականգնէր սրբադասման կարգը ու եթէ մեր Եկեղեցւոյ իշխանները կրողն ըլլային (կամ՝ տայ Աստուած, գոնէ յետագային ըլլան) հոգեւոր ու բարոյական արժէչափերով առաջնորդողներ, կասկած չունիմ, որ օր մը կը սրբադասէին նաեւ Զարեհ Սրբազանը: Սա գրեցի նկատի ունենալով նաեւ Ձեր տեղի՛ն մտահոգութիւնը, որ «Եկեղեցւոյ իշխանաւորներ տուրք չեն տար իրենց անձնական հակումներուն, եւ իրենց վստահուած հեղինակութիւնը չարաշահելով ընթացք չեն տար կամայական սրբադասումներու»: Անձնապէս, կը վախնամ, որ Ձեր մտահոգութիւնը կը վերածուի իրականութեան՝ Աստուած մի՛ արասցէ: Մեր կեանքին մէջ այնքան բան գլխիվար է շրջուած, որ կը վախնամ, թէ Հայոց Ցեղասպանութեան զոհերու

սրբադասումով Հայ Եկեղեցւոյ սրբադասման աւանդոյթին վերականգնումը կրնայ Փանտորայի Տուփի բացման նմանիլ...

Հիմա գրեմ ըստ էութեան:

Կ'ուզէի, որ նախ ճշդէինք, թէ պէտք է սրբադասել միայն Մեծ Եղեռնի՞, թէ՞ առհասարակ Հայոց Ցեղասպանութեան զոհերը: Առաջինին ժամանակային ընդգրկումը այսօր ընդունուած է համարել 1915-էն 1918 ձգուող տարիները, մինչդէռ Հայոց Ցեղասպանութիւնը կ'ընդգրկէ 1894-էն 1923 երկարող ժամանակահատուածը, եւ Մեծ Եղեռնը անոր միայն մէկ



մասն է, թէև՝ ամենէն ողբերգականն ու աղիտալին՝ իր տարողութեամբ ու հետեւանքներով: Հետեւաբար, խոցելի է 21-րդ էջի վերնագիրին մէջ Հայոց Ցեղասպանութեան նահատակութեան թուականը միայն 1915-ով սահմանափակումը: Անշուշտ, կը հասկնամ, որ հոս, 1915-ը Դուք նկատի ունեցած էք ոչ թէ ժամանակային հասկացութիւն, այլ՝ պարզապէս խորհրդանիշ տարերթիւ: Սակայն, լաւ կ'ըլլար, որ մենք, սրբադասումէն առաջ, ունենայինք համազգային ՄԻԱՄՆԱԿԱՆ, ԸՆԴՈՒՆՈՒՄԾ սահմանումներ Հայոց Ցեղասպանութեան ժամանակաշրջանի, զոհերու թիւի, նոյնիման «զոհ» հասկացութեան, ընդգրկած տարածքի, պատասխանատուներու եւ անոնց մեղսակցութեան չափի եւ այլնի մասին, բան մը, որ բազմիցս բարձրաձայնած եմ հայագիտական շրջանակներու մէջ թէ մամուլով, առանց լսող ականջներու...

Այս բոլորը կ'առնչուին նաեւ սրբադասման հարցին, մանաւանդ, որ, ինչքան հասկցայ, սրբադասման Ձեր հիմնական արժէչափը վասն հաւատի նահատակութիւնն է: Մեծ Եղեռնէն առաջ ու անկէ յետոյ, Հայոց Ցեղասպանութեան յիշեալ ժամանակահատուածին մէջ եղած են նաեւ հազարաւոր նահատակութիւններ վասն հաւատոյ: Օրինակ, իմ հօրական մեծ մեծ հայրը՝ Գրիգոր Եազըճեանը Ատանայի մէջ 1909-ի ապրիլեան եղեռնին նահատակուած է վասն իր քրիստոնէական հաւատքին: Մեծ հայրս՝ Գեորգ Եազըճեան երէցը կը պատմէր, թէ իր մօր ու երկու եղբայրներուն ներկայութեան, ջարդարարները մտած են Ատանայի մէջ իր հօր պղնձագործի արհեստանոցը եւ, կացինը վիզին դրած, պահանջած են տեղոյն վրայ իսլամն ընդունիլ, այլապէս սպառնալով սպաննել: Գրիգորը հարցական նայուածք մը նետած է իր կնոջ կողմը: Վերջինս թրքերէնով (ատանացի հայերը թրքախօս էին) ամուսնոյն յորդորած է չուրանալ քրիստոնէութիւնը: Մեծ հայրս կը պատմէր, որ Գրիգորի մերժումէն ակնթարթ մը ետք, իրենց աչքերուն առջեւ կացինի հարուածը իջաւ իր հօր ծոծրակին... Մեծ հայրս սխալ կը նկատէր իր ծնողներուն պահուածքը, ըսելով, թէ ի՞նչ կ'ըլլար եթէ առերես ուրանար քրիստոնէութիւնը ու յետագային ետդարձ կատարէր, եւ կը դատապարտէր իր հայրն ու մայրը՝ որբութեան դառնութիւնները իրեն՝ 9 տարեկան տղեկին ցմրուր ճաշակեցուցած ըլլալնուն համար: Հիմա՝ հարցումը. այս եւ նման դէպքերու զոհերը եւս սրբադասուելու չե՞ն արդեօք: Սա չեմ ըսեր, քանի որ այս պարագային նահատակը իմ ապուպապս է: Ոչ: Քաւ լիցի: Նման հազարաւոր դէպքեր եղած են: Անոնց յիշատակին հետ ինչպէ՞ս պէտք է վարուի մեր Եկեղեցին:

Միւս հարցերէն մէկն ալ, որ մանաւանդ վերջին տարիներս՝ այսպէս կոչուած «իսլամացուած հայեր»ու երեւոյթի հանրային քննարկումներուն կ'աղերսուի, հետեւեալն է. բռնութեան տակ իսլամացուածներն ալ պէ՞տք է նկատենք ցեղասպանութեան զոհեր, թէ ոչ: Եթէ այո, հապա մի՞ թէ արդար է վասն հաւատոյ կեանքը զոհաբերածն ու կեանքը պահպանելու համար հաւատքը ուրացածը նոյն նժարին դնել: Եթէ ոչ, հապա որքանո՞վ արդար է այդ կենդանի մնացած ու իրենց մեծագոյն մասով՝ ողջ կեանքը տառապանքի – այդ շարքին՝ ուրացողի ներքին հոգեկան պայքարի - մէջ անցուցած հայերը (կամ՝ եթէ կ'ուզէք՝ նախկին հայերը) (Գեորգ Աբելեանի բնորոշումով՝ «ցկեանս նահատակեալներ»ը) նահատակ չհամարել: Այս իրողութիւնները նաեւ իրաւական երեսակներ ունին՝ բարոյականի կողքին:



Գրքոյկի 20-րդ էջին մէջ, կարգ մը երկիրներու կողմէ Հայոց Տեղասպանութեան ճանաչման մասին պարբերութեան մէջ կը գրէք, թէ ան տեղի ունեցած է Օսմանեան Կայսրութեան մէջ: Շատ կը փափաքէի, որ յիշատակուէր գոնէ նաեւ «Արեւմտեան Հայաստան»ը, թէւ շատ լաւ գիտէնք, թէ ան ամբողջութեամբ թրքական գրաւման տակ կը գտնուէր եւ, դժբախտաբար, կը գտնուի առ այսօր: Շատ ճիշդ ըրած էք, որ 75-րդ եւ 77-րդ էջերուն մէջ Արեւմտեան Հայաստանը (կը նախընտրեմ գործածել «Հայաստանի արեւմտեան հատուած» բառակապակցութիւնը՝ Հայաստանի Մէջուրեան գաղափարը շեշտելու համար) եւ Կիլիկիան առանձին յիշատակելով իբրեւ հայոց բնաջնջման տարածքներ (ողբերգութիւն է այն, որ շատեր Կիլիկիան ալ Արեւմտեան Հայաստանի մէջ կը կարծեն: Մենք մեր հայրենիքին յստակ սահմաններն իսկ չենք գիտեր, ինչը ՄԵԾԱԳՈՅՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ է):

Ուրիշ վերապահում մըն ալ այն է, որ նշուած տարիներուն (1915-1923) երիտթուրքերը, աւելի ստոյգ՝ անոնց իշխանութեան օրերու օսմանեան բանակի ասքեարները հազարաւոր հայեր կոտորած են նաեւ Պարսկահայքի այն տարածքներուն մէջ, ուր ոտք դրած է այդ պիղծ ասքեարին կրունկը: Այս պարագային, Պարսկահայքի այդ կոտորուած հայերը չէ՞ն մտներ Հայոց Տեղասպանութեան զոհերու շարքին մէջ: Կը կարծեմ, թէ համաձայն կ'ըլլաք, որ անոնք եւս նահատակներու շարքին պէտք է դասուին:

Հետաքրքրական էր իմանալ Հոգելոյս Տիրան Արք. Ներսոյեանի յայտնած վերապահումները, որոնք, կամ՝ անոնց մէկ մասը, այսօր եւս կը պահպանեն իրենց այժմեականութիւնը: Սակայն, ինչպէս նկատեցի նաեւ գրքոյկէն ստացած տպաւորութենէս, եթէ ամէն ինչ ծանր ու թեթեւ պիտի ընենք, ապա ոչ թէ սուրբ, այլեւ՝ հերոս իսկ պիտի չկրնանք ունենալ: Կ'արժէր, որ գրքոյկին մէջ յայտնուէր այն գաղափարը, որ բոլորս, ներառեալ՝ նահատակուածները, մարդկային արարածներ ըլլալով՝ սխալական են, ոչ-կատարեալ արարեալները Ամենակատարեալ Արարիչին: Նոյնիսկ սուրբերը ունեցած են իրենց մեղքերն ու սխալները (անոնց սրբութեան յատկանիշներէն մէկն ալ ճիշդ այդ՝ իրենց անկատարութեան եւ մեղաւորութեան գիտակցումն է եւ աստոր համար անոնց անկեղծ ապաշխարանքը Տիրոջ առջեւ): Համաձայն եմ այն բոլոր անձերուն յայտնած տեսակէտներուն, որ մեր ժողովուրդին համար պէտք է ըլլան նոր սուրբեր եւ նոր ազգային հերոսներ (նկատի չունիմ Հ.Հ.ի նախագահի հրամանագիրներով շնորհուած 16 թէ 17 «ազգային հերոս»ները, որոնց ինքնութիւնը հայ ժողովուրդի երեւի 99 տոկոսին համար անյայտ է...): Մա ունի եւս մէկ կարեւոր երեսակ. արդարեւ, ի բացակայութեան հայ նոր սուրբերու, Միջին Արեւելքի հայերէն ոմանք կ'այցելեն ոչ-հայազգի սուրբերու ուխտատեղիներ՝ այդպիսով որոշակիօրէն օտարուելով Մայր Եկեղեցիէն. Կ'արժէ, որ այս միտքն ալ տեղ գտնէ Ձեր արդարացի պայքարին մէջ՝ յանուն հայ նոր սուրբերու հռչակման): Մեր ժողովուրդը հերոսացուցած է Գեորգ Զաւուշը, Արաբօն, Զօրավար Անդրանիկը եւ շատ ուրիշներ: Անոնք սխալներ ու մեղքեր չէ՞ն գործած: Անպայման որ գործած են, երբեմն՝ նոյնիսկ ծանր տեսակէն: Սակայն, ժողովուրդը ինք է հերոսացուցեր զանոնք, քանի որ նոր սխրանքներու համար ան պէտք ունի օրինակելի տիպարներու: Նոյնն ալ պէտք է ըլլայ սրբադասման պարագային:

Գրքոյկէն այն տպաւորութիւնն ստացայ, որ Դուք պաշտամունքի մօտեցող սէր ու խոր յարգանք ունիք Կոմիտաս Վարդապետին նկատմամբ: Ո՞ր հայը կրնայ այդպիսին չունենալ:



Սակայն, նկատեցի, թէ այն համոզումն ունիք, որ Հայոց Երգի Մաշտոցին խելագարութիւնը կը նկատէք «հետեւանքը այն ցնցումներուն, որոնց ենթարկուեցաւ Կոմիտաս Վարդապետ՝ տեսնելով ողջակիզումը իր պաշտելի Եկեղեցիին եւ սիրելի ժողովուրդին»:

Կը փափաքիմ այս տողերուն միտք բանին հասկնալ իրենց փոխաբերական իմաստով, քանի որ Կոմիտասը, միւս մտատրականներուն հետ աքսորուած ըլլալով շոգեկառքով, եւ անոնցմէ քանի մը հոգիին նման վերադառնալով Կ. Պոլիս նոյն փոխադրամիջոցով, չէր կրնար ականատեսն ըլլալ իր ժողովուրդի Գողգոթային՝ խելագարելու համար: Ուրիշ բան, որ ան լսելով հայ ժողովուրդին բնաջնջումը, վստահաբար հոգեկան խոր ապրումներ պիտի ունենար, որոնք կրնային առանց այդ ալ խախտուած իր հոգեկան առողջութիւնը անդարմանելի հիւանդութեան վերածել: Կոմիտասի հոգեկան առողջութեան թղթապանակը ուսումնասիրած հայ հոգեբոյժներ այն համոզումը կը յայտնեն, որ Մեծ Եղեռնի լուրերը միայն ԱԲԵԼՑՈՒՑԱՄ ԵՆ Կոմիտասի հոգեկան տուայտանքները, որոնք մինչ այդ ալ կային: Արդարեւ, գաղտնիք չէ, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս Բ. եւ Գեորգ Ե. Թիֆլիսեցի, ինչպէս նաեւ Մայր Աթոռի ուրիշ միաբաններ կը հալածէին Կոմիտասը, ինչը հոգեկան տառապանք կը պատճառէր Անմահն Վարդապետին: Իմ բարեկամներէս հոգեբոյժ Յարութիւն Մինասեանը համոզուած է, որ Կոմիտասը մինչեւ Մեծ Եղեռնը տառապած է շիզոֆրենիայով, որ ուժեղացած է 1910-ական թուականներու երկրորդ կէսին: Կայ նաեւ վարկած, թէ Կոմիտաս հասած է խելագարութեան աստիճանին, երբ յայտնաբերած է, որ սեւ ձեռքեր անյայտացուցած կամ վերացուցած են տասնամեակներու իր տքնաջան աշխատանքին արդիւնքն եղող բազմաթիւ նիւթեր, որոնց շարքին՝ հայոց խազագրութեան յայտնագործութեան իր ուսումնասիրութիւնները:

Որքան հասկցայ, Դուք Կոմիտասը նկատի ունիք իբրեւ հաւաքականութեան խտացում-խորհրդանիշ: Այդ այդպէս է, հայ ժողովուրդի գիտակցութեան մէջ ալ Կոմիտասի անունը ուղղակիօրէն կ'առնչուի Մեծ Եղեռնի նիւթին: Սակայն ըսել, թէ Կոմիտասի հոգեկան հաւասարակշռութեան խախտումը եղած է Մեծ Եղեռնին պատճառով, ճիշդ չէ:

64-րդ էջին մէջ կը գրէք, թէ «Եկեղեցիին համար գերազանց եւ հիմնական ելակէտ պէտք է հանդիսանայ վասն Յիսուսի ու հաւատոյ կատարուած հաւաքական մարտիրոսութեան փաստը»: 67-րդ էջին մէջ փոքր յաւելում մը կատարած էք, նշելով, թէ թուրքին համար «ոճիրը գործելու մղիչ ուժ դարձաւ զոհին ազգային եւ կրօնական-քրիստոնէական պատկանելիութիւնը» (ընդգծումը իմն է – Գ. Ե.): Իմ աներեր համոզմամբ – որ հիմնուած է Հայոց Ցեղասպանութեան մասին ծովածաւալ գրականութեան ընթերցման վրայ, նաեւ՝ նոյն նիւթին շուրջ խմբագրածս աւելի քան մէկուկէս տասնեակ մեծածաւալ հատորներուն վրայ – հայոց նահատակութեան համար հիմնական մղիչ ուժը հանդիսացած է ոչ թէ կրօնը, այլ՝ ազգութիւնը: Իսկ թէ ինչո՞ւ, ոճրագործ կազմակերպիչներն ու անոնց գործիք ծառայած խաժամուժը կը բաշխէին իսլամացողներուն կեանքը, շատ պարզ է՝ այն պատճառով, որ համոզուած էին, որ իսլամացումով՝ հայը շատ բան կը կորսնցնէ իր ազգային ինքնութենէն եւ ի վերջոյ կը ձուլուի թուրքա-քիւրտա-իսլամական կաթսային մէջ: Հայոց Ցեղասպանութեան կազմակերպիչները գոնէ իրենք գիտէին Օսմանեան Կայսրութեան գոյառման ու ծաւալման պատմութիւնը, թէ ինչպէս ենիչերիները – քրիստոնէայ ընտանիքներէ բռնախլուած արու



երեխաները – ինչպիսի՛ մոլեռանդութեամբ կռուած էին յանուն օսմանեան կիսալուսինի փառքին: Հայութիւնը բնաջնջեցին ոչ թէ քրիստոեայ հայր վերացնելու համար, այլ՝ ՀԱՅԸ վերացնելու համար: Ասիկա շատ կարեւոր հիմնադրոյթ մըն է, որ կը բացատրէ իմ լուրջ վերապահութիւնս Հայոց Յեղասպանութեան ԲՈԼՈՐ նահատակները սրբադասելուն հանդէպ: Այս հարցին շուրջ միտքերու երկարատեւ փոխանակումներ ունեցած եմ Պէյրութի մէջ՝ ընկերներու հետ, երբ հոն գտնուած օրերուն կը խմբագրէի ընկերներէս Յարութիւն Իսկահատեանի «Վկայարան Հայկական Յեղասպանութեան» շարքին հերթական հատորը (մատենաշարի առ այսօր լոյս տեսած 5 հատորներուն եւ գրեթէ պատրաստ Զ. հատորին խմբագիրը նուաստս է): Երկար բանավէճերէ ետք հասանք այն եզրակացութեան, որ Հայոց Յեղասպանութեան զոհերու երբեւէ սրբադասման պարագային, սրբադասման արժանի են ոչ թէ կրաւորապէս նահատակուածները, այլ՝ վասն ազգի եւ վասն հաւատոյ դիմադրութեան ստեն զոհուածները: Այլապէս, այնպէս դուրս կու գայ, որ կը ֆէթիշացնենք «Զեր սուրը եւ մեր պարանոցը» արտայայտութեան միտք բանին, մինչդեռ նոյն Վարդանանք, նոյն «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» նշանախօսքով ԶԵՆՔ ՎԵՐՅՈՒՅԻՆ՝ գիտնալով հանդերձ, որ ոյժերն անհաւասար էին եւ իրենց պայքարը շատ հաւանաբար կը յանգէր նահատակութեան, ինչպէս որ ալ եղաւ: Մակայն, անոնք մահացան՝ դիմադրելով; Գիտենք նաեւ, որ Վարդանանց շարժումը համաժողովրդական էր, որուն մասնակիցները հարիւր հազարներ էին, եթէ ոչ միլիոններ: Մակայն, մեր Եկեղեցին սրբացուց ՄԻԱՅՆ Աւարայրի դաշտին վրայ ինկած 1036 վկաներն ու Ղեւոնդեանք եւ ոչ թէ այդ հարիւր հազարները: Իմ համոզմամբ, նոյն ձեւով եւ նոյն մօտեցումով պէտք է կատարուի Հայոց Յեղասպանութեան զոհերուն սրբադասումը: Սուրբ պէտք է հռչակուին վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց ՊԱՅՔԱՐԻ գուպարներուն մէջ նահատակուածները ՄԻԱՅՆ: Հետեւաբար, Զեր գրքոյկի աւարտական պարբերութիւնը, որ ձեւակերպումն է սրբադասումէն ետք յիշատակութեան կարիքն ունի այս գաղափարն արտայայտող բառերով լրացման:

Լիովին համաձայն եմ Զեզի հետ, երբ կը գրէք, թէ մեր եկեղեցին եւ ազգը պէտք ունին նոր սուրբերու: Ինչպէս վերը նշեցի՝ նաեւ՝ նոր, սակայն ԻՍԿԱԿԱՆ հերոսներու: Նոր սերունդները, դաստիարակուելու համար, կարիքն ունին այդպիսի նոր, օրինակելի տիպարներու, որպէսզի անոնցմէ ներշնչուին ու անոնց օրինակին հետեւին՝ ի փառս Եկեղեցոյ, Հայրենիքին եւ հանուր մարդկութեան, եւ, ի վերջոյ՝ Արարիչին:

Կը յուսամ, որ Զեր եւ շատ շատերու այս բաղձանքը կը կատարուի այս տարի իսկ, առանց աւելորդ յետաձգման, եւ Հայ Եկեղեցոյ Եպիսկոպոսական յաջորդ Ժողովը կ'ըլլայ ոչ թէ զրօսաշրջութեան կամ փոխադարձ ծանօթացման հաւաք մը, այլ՝ այնպիսի հաւաք, ուր լրջօրէն կը քննարկուին մեր ազգն ու մարդկութիւնը յուզող շատ եւ շատ հարցեր, յատկապէս՝ հայեցակարգային բնոյթ ունեցող խնդիրներ, որոնց պատասխանները մեր ժողովուրդը կը սպասէ Հայ Եկեղեցոյ կրօնական այդ բարձրագոյն իշանական մարմինէն:

Վերջին խօսք մըն ալ Զեր լեզուին մասին: Պարզապէս հիացած եմ Զեր լեզուի մաքրութեամբ ու հարստութեամբ, եւ միաժամանակ՝ պարզութեամբ: Հայոց Մեծագոյն Սուրբին՝ Մեսրոպ Մաշտոցին նկատմամբ իսկական յարգանքը կ'ըլլայ անոր այբուբենով գործառնութեան մէջ գտնուող լեզուին պատկառանքով յագեցած սիրով վերաբերելով, ինչը առատօրէն առկայ է

Ձեր գրքոյկին մէջ եւ որու համար ալ առանձնապէս շնորհակալութիւնս կը յայտնեմ Ձերդ Արժանապատուութեան:

ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՏԱՆՂԻ Է – 9 -

Ը. Եկեղեցւոյ ծառայութեան դաշտին մէջ ընդգրկել կանանց մասնակցութիւնը եւ անոնց տալ գործունէութեան ընդարձակ դաշտեր: Եկեղեցին չի կրնար ըլլալ առողջ եւ ամբողջական առանց կանանց մասնակցութեան:



Կանանց եւ մասնաւորաբար սարկաւազուհի կանանց-քոյրերու մասնակցութիւնը քրիստոնէական առաջին դարերէն սկսեալ իր տեղն ու դերը ունեցած է ճշմարիտ խօսքի տարածման եւ հասարակական խնամակալական աշխատանքներու մէջ:

Նոր Կտակարանով փոխուեցաւ ժողովրդական վերաբերմունքը որ կար կանանց նկատմամբ: Յունական աշխարհի մէջ կինը կը նկատուէր ստորադաս այր մարդուն: Արիստոտել կիները կը նկատէր ստրուկի եւ ազատ մարդու միջեւ գոյութիւն մը: Կանայք Հռոմէական շրջանին թէեւ աւելի ազատութիւն կը վայելէին քան Յունական շրջանին, սակայն

եւ այնպէս կը նկատուէին երկրորդ դասակարգի անձնաւորութիւններ, միշտ նախապատուութիւն տրուելով այր մարդուն:

Յիսուսի ծնունդը Ս, Կոյս Մարիամէն մարդկային պատմութեան մէջ անկիւնադարձ մը եղաւ կանանց նկատմամբ նոր հասկացողութեան: Քրիստոս ինք դատապարտեց բոլոր անոնք որոնք կը մերժէին կինը որպէս արհամարուած արարած: Աշակերտներ երբ տեսան որ Յիսուս Սամարիացի կնոջ հետ կը խօսէր, կը զարմանային. «Եւ մէկն ալ չըսաւ անոնցմէ թէ ի՞նչ կ'ուզես, կամ ինչո՞ւ կը խօսիս դուն անոր հետ» (Յովհ. 4:27): Նոյնպէս Քրիստոս մերժեց տեղի տալ Փարիսեցիներու պնդումներուն, երբ մեղաւոր կինը «իբր արցունքներով կը թրջէր Քրիստոսի ոտքերը եւ իր գլխուն մազերով կը սրբէր, կը համբուրէր անոր ոտքերը եւ օծանելիքով կ'օծէր ատոնք» (Ղուկ.7:38) Ու այս բոլորէն ետք Քրիստոս դառնալով մեղաւոր կնոջ յայտարարեց . «Քու հաւատքդ փրկեց քեզ, գնա խաղաղութեամբ» (Ղուկ.7:50):

Նոյնքան գօտեպնդիչ են Պողոս Առաքեալի խօսքերը ուղղուած Կորնթացիներուն, ուր կ'ըսէ. «Բայց Տիրոջ կարգադրութեամբ, ո'չ կինն է առանց այր մարդուն, եւ ո'չ ալ այր մարդը՝ առանց կնոջ» (Ա. Կորնթ. 11:11), այլ խօսքով զիրար կը լրացնեն եւ կ'ամբողջացնեն:

Դարձեալ՝ Պողոս Առաքեալ իր Հռոմայեցիներուն ուղղուած նամակին մէջ իր ողջոյններու կարգին կը յայտարարէ. « Ձեզի կը յանձնարարեմ մեր քոյրը (Յունարէնի մէջ սարկաւազուհի բառը կը գործածուի) Փիբէն, որ մեր Կենքրայի հասարակութեան պաշտօնէաններէն է, որ Տիրոջ անունով, սուրբերու արժանի հիւրընկալութեամբ ընդունիք զինք, թէ ու թիկունք ըլլաք անոր ամէն բանի մէջ, որ ձեզի կը դիմէ, որովհետեւ ինքն ալ հոգատար եղաւ շատերու,



նոյնիսկ ինձի» (Հռոմ. 16:1-2): Պօղոս Առաքեալի այս խօսքերէն կարելի է ենթադրել որ քոյր Փիբէն քարոզիչի եւ առաջնորդողի դեր ստանձնած է քրիստոնէական եկեղեցոյ առաջին շրջաններուն:

Փիլիպպեցիներուն գրուած իր նամակին մէջ, Պօղոս Առաքեալ դարձեալ կ'արտայայտուի երկու կանանց՝ Եւոդիայի եւ Սիւնտիքի մասին եւ հետեւեալ յորդորները կու տայ «Ով իմ մտերիմս - կարգ մը բնագիրներու մէջ անձնանուն թարգմանուած է - եւ լծակիցս, աջակից եղիր դուն անոնց, որոնք իմ, Կղեմէսի եւ միւս գործակիցներու հետ միասին պայքարեցան Աւետարանի համար, եւ կեանքի գրքին մէջ գրուած են անոնց անունները» (Փիլիպ.4:3):

Ուրիշ վկայութիւն մը եւս ունինք Պօղոս Առաքեալէն, իր Հռոմայեցիներուն գրուած նամակին մէջ, ուր այսպէս կ'արտայայտուի. « Ողջոյնս տուէք Մարիային, որ աշխատանքի մեծ վաստակ ունի ձեր մէջ: Ողջոյնս տուէք Անդրոնիկոս եւ Յունիա ազգականներու եւ գերութեան ընկերներու, որոնք երեւելի են առաքեալներուն մէջ եւ որոնք ինձմէ առաջ ընդունած էին արդէն Քրիստոսի հաւատքը» (Հռոմ.16:6-7): Այս բոլորը պարզապէս ցոյց կու տան կանանց մեծ վաստակը Քրիստոնէական հաւատքի տարածման մէջ:

Հակառակ Պօղոս Առաքեալի տուած պատուերներուն եւ յորդորներուն, կանանց մասնակցութիւնը սահմանափակ մնացած է Եկեղեցոյ ծառայութեան դաշտին մէջ, նամանաւանդ երբ հարցը կը վերաբերի եկեղեցոյ բարձր աստիճաններու ձեռնադրութեան, որովհետեւ Հին Կտակարանէն սկսեալ Սուրբ Գրոց ուսուցումները կը շեշտեն այր մարդուն գերիշխանութիւնը եւ կնոջ ստորադասութիւնը եւ նոյն ձեւով ալ կը շարունակուի Առաքեալներու ուսուցումներուն մէջ:

Հին եւ Նոր Կտակարաններուն մէջ արտայայտուած այս մտքերը կանանց նկատմամբ՝ ոմանք հնադարեան կը նկատեն եւ պատճառ դարձած են զանազան մեկնաբանութիւններու եւ մասնաւորաբար աստուծաբանական եւ եկեղեցական բուռն վիճաբանութիւններու: Բոլոր անոնք որոնք կը կառչին Ս. Գրոց տառացի մեկնաբանութեան, անառարկելի կը նկատեն այդտեղ արտայայտուած գաղափարները, եւ հետեւաբար անփոփոխելի, ինչ որ առիթ տուած է նման մտածողներուն յայտարարելու, որ եթէ Քրիստոս կամ Առաքեալներ ուզէին որ կանայք եւս ըլլային եկեղեցոյ ձեռնադրեալ քահանաներ, պիտի յայտարարէին բացորոշ կերպով իրենց միտքը: Նկատի ունենալով որ նման յայտարարութիւններ չենք գտներ Նոր Կտակարանի մէջ, բնականաբար Եկեղեցին որդեգրած է այն սկզբունքը, թէ ինչ որ հաստատուած է աստուածային տնօրինութեամբ՝ կարելի չէ խախտել, հետեւաբար կանայք չեն կրնար ձեռնադրեալ քահանաներ ըլլալ:

Շատեր այսօր, մանաւանդ Աւետարանչականներ՝ այս հին հասկացողութիւնը կը նկատեն անտեղի, անհաճոյ եւ անարգական: Մեր նպատակէն շեղած կ'ըլլանք եթէ փորձենք աւելի խորանալ եւ մանրամասն վերլուծել ընդհանուր Քրիստոնէական Եկեղեցոյ աստուածաբանական մտածողութիւնը:

Հայց. Եկեղեցին քրիստոնէական նախնական տարիներուն եւ յաջորդաբար միշտ տեղ տուած է կանանց՝ եկեղեցոյ ծառայութեան դաշտին մէջ, եւ մեր



Եկեղեցւոյ պատմութիւնը լեցուն է սրբուհիներու լուսապսակ փառապանծ վարքով: Իններրորդ դարէն սկսեալ, աւելի յստակ տեղեկագրութիւններ կը գտնենք կոյսերու, քոյրերու եւ սարկաւագուհիներու մասին մեր Եկեղեցւոյ պատմագրութեան մէջ, ուր կը նկարագրուին անոնց կատարած Աստուածահաճոյ ծառայութիւնները. ուսուցումն բանին կենաց, խնամել որբեր եւ ծերեր, մխիթարել գրկուածներն ու կորուսեալները, եւ խրատել կանանց՝ իրենց ընկերային դժուարութեանց մէջ:

Մեր Եկեղեցւոյ պատմութենէն գիտենք որ կարգ մը եկեղեցւոյ հայրեր, ինչպէս Ներսէս Լաբրոնացիին եւ Պօղոս Տարօնեցիին դէմ էին սարկաւագուհիներու գոյութեան եւ կ'ուզէին փակել անոնց կուսանոցները: Մինչդէռ՝ Մխիթար Գօշ (1130-1213) ջատագով եղած է եւ քաջալերած սարկաւագուհիներու գոյութիւնը եւ լայնօրէն նկարագրած իր Դատաստանագիրքին մէջ՝ անոնց օգտակարութիւնները Եկեղեցւոյ ծառայութեան դաշտին մէջ. «Են եւ ի կանանց սարկաւագունք ձեռնադրեալք, որք կոչին սարկաւագուհիք, վասն քարոզելոյ կանանց եւ ընթեռնուլ Աւետարան, զի մի՛ մտցէ անդ այր, եւ մի՛ նա արտաքս քան զվանսն ելանիցէ: Բայց յորժամ մկրտութիւն առնեն քահանայքն, զան յաւազանն, զի զկանայսն նոքա լուանան ջրով քաւութեանն՝ ներքոյ վարագորին: Սքեմ է նոցա ամենայն հաւատաւորաց, բայց ի ճակատն իսաչ լինի, եւ քուշկէն ի յաջմէ կողմանէ ի կախ ունենալով: Մի՛ ինչ նոր եւ անկարգ վարկցիս զայս, քանզի ի սրբոյ առաքելոյն աւանդութենէ ուսանիմք, քանզի ասէ՛ յանձն առնեմ ձեզ զՓիբէ քոյր մեր, որ է սպասաւոր եկեղեցւոյն» (Դատաստանագիրք) էջ136-137):

Յաջորդաբար պատմութեան ընթացքին կը յիշատակուին զանազան վանքերու-կուսանոցներու մէջ Սարկաւագուհիներու-քոյրերու գոյութիւնն ու առաքելութիւնը: ԺԷ. դարուն, Մովսէս Տաթեւացի Կաթողիկոս, եկեղեցւոյ բարեկարգութեան կողքին, քաջալերեց կանանց հոգեւոր ուսուցումը եւ անոնց առաքելութիւնը Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ծառայութեան դաշտէն ներս:

Կուսանոցներ հաստատուած են նաեւ Արցախի մէջ եւ իրենց գոյութիւնը պահպանած են երկար տարիներ: Աւելի ուշ ժամանակներու մէջ հաստատուած են նաեւ կուսանոցներ ա՛յլ քաղաքներու մէջ, Աստրախան (Ռուսաստան), Եազլովիեց (Լեհաստան), Թիֆլիս (Վրաստան), Պոլիս(Թուրքիա), Պուրսա (Թուրքիա) եւ Լիբանան (Ճիպէյլի Թոշնոց Բոյն), ուր տակաւին կը գործեն երեք քոյրեր: Փոքրիկ կուսանոց մըն ալ կայ այսօր Ս. Հռիփսիմեանց անունով, որ կը գործէ Ս, Էջմիածնի հովանաւորութեան ներքոյ:

Կասկած չկայ մեր մտքին մէջ որ կային, եւ տակաւին կան սարկաւագուհիներ եւ քոյրեր Հայց. Եկեղեցւոյ ծոցին մէջ իրենց փայլուն աստուածահաճոյ առաքելութեամբ: Դժբախտաբար Եկեղեցին տակաւին սահմանափակած է անոնց գործունէութեան դաշտը եւ չէ շնորհած անոնց աւելի ընդարձակ գործունէութիւն, ինչպէս շնորհած են Օրթոտոքս եւ Կաթողիկէ եկեղեցիները: Հոս հարց կը ծագի մեր մտքին մէջ թէ ինչո՞ւ Հայց. Եկեղեցին նոր եւ ընդարձակ առաքելութեան դաշտ մը չի ստեղծեր կոչում ունեցող եւ նուիրեալ կանանց առջեւ, նոյնիսկ եթէ Եկեղեցին ուզէ կառչած մնալ Աւետարանական հնադարեան սկզբունքներուն:



Դիտեցէք ձեր շուրջը եւ տեսէք թէ ի՛նչ դերեր կը ստանձնեն կանայք եկեղեցական եւ կրօնական այլ հաստատութիւններէ ներս: Օրինակի համար՝ Անկլիքան Եկեղեցին, Աւետարանական եւ այլ համայնքներ: Բոլորն ալ կարելոր նկատած են կանանց դերը իրենց հաստատութիւններէն ներս: Հայց. Եկեղեցին ալ, իր բարեկարգութեան աշխատանքին մէջ, պէտք է յատուկ բաժին մը տրամադրէ կանանց, եւ անոնց մէջէն նուիրեալներու մասնակցութիւնը ապահովէ իր հոգեւոր եւ հասարակական առաքելութեան դաշտին մէջ:

Եւ վերջապէս շատ իմաստալից է Ֆրանսիս Պապի քաջարի յայտարարութիւնը. «Եկեղեցին չի՛ կրնար ըլլալ առանց կանանց դերին: Կանանց հանճարը կարելոր է երբ կարելոր որոշումներ կ'առնենք»: Ա՛յս է մեր այսօրուան մարտահրաւերներէն մէկը, որու մասին լրջօրէն պէտք է մտածէ յաջորդ Եպիսկոպոսական Ընդհանուր Ժողովը, եթէ կը փափաքի մեր Եկեղեցին կենդանի եւ ամբողջական դարձնել:

ՈՍԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ Շար. Թ.

3, Փետրուար, 2014

ՏՈՂՈՒ-ՆԵՐ ՊԻՏԻ ՉԸԼԼԱՆ ՄԵՐ ԹԻՐԱՆԸ

Ոմն Տողու Փերինչէքի նման անձնատրութիւն մը անպարտ հռչակելու Երոպական Դատարանի վճիռը, աշխարհաքաղաքական շահերու մէջ սուզուած համակարգի մը բարոյական չափանիշներուն ապացոյցն է: Այլ խօսքով՝ տնտեսական անդառնալի նաւաբեկումէն փրկուելու լաստ փնտռող, Երոպական Միութեան շահադիտական քաղաքականութեան հերթական արտայայտութիւնը :



Մենք ենք, որ բարոյական գնահատանքներու փնտռութիւն տակ խրած՝ պատմական ճշմարտութեան մը դատապարտումն ու պահանջատիրական մեր պայքարը դարձուցած ենք մարդասիրական հայեցակարգերու կողմնացոյց: Ինքզինք ժողովրդավարութեան եւ մարդկային ազատութիւններու նախահայր յորջորջող Երոպական ցամաքամասը այսօր դարձած է իր իսկ դաւանած ազատութիւններուն եւ բարոյական չափանիշներուն մեծագոյն գոհը՝ ուր վիստացող ընկերային, քաղաքական, էլեւմտական եւ տնտեսական իրովի մեկնաբանութիւններ կը

խաչաձեւեն զիրար: Մի խաբուիք Երոպական ընտանիքին կեղծ մարգարէութիւններէն: Հեռանկարի բացակայութիւնը, տնտեսական եւ ընկերային գորշ հակասութիւնները, ընկերային մեծ պայթումի մը սեւին տուայտող հասարակարգի մը վերածած է կաշառքի ու փտածութեան ճահիճին մէջ լողացող Երոպական ցամաքամասը: Ո՛հ կաշառք ըսինք, այս ինչ՞ զրպարտութիւն ... Երոպական Միութեան մէջ: Այո սիրելիներ: Տակաւին քանի մը օր առաջ, Երոպական Միութեան Ներքին հարցերու յանձնակատար Մեխիլիա Մալմսթրոմ, տարեկան իր տեղեկագիրը փոխանցելու պահուն բարձրաձայն յայտարարեց, թէ



փտածութիւնը եւ կաշառքը «շնչահեղձ» կը դարձնեն համակարգը: Փտածութիւնը տարեկան 120 միլիաո եւրօ կ'արժէ Եւրոպական Միութեան տնտեսութեան:

Այլանդակութիւններու այս կրկեսին մէջ, երբեք տարօրինակ պիտի չըլլան այսօրինակ վճիռներ եւ յայտարարութիւններ: Զաւեշտային բաժին մը կու գայ աւելնալու եւրոպական երկիրներու դիւանագիտական ներկայացուցիչներուն երկիմաստ եւ երկդիմի յայտարարութիւններուն՝ ոմանք առանց ամչնալու կը յայտարարեն, թէ «հարց»էն տեղեակ ըլլալով, արդէն իսկ բողոքներ սկսած են ստանալ այս ուղղութեամբ...: Բարեբախտութիւն՝ն պէտք է սեպել, որ տեղեակ են «հարցէն» ... : Պատմական ճշմարտութեան խեղաթիւրումն է «հարց»ը, թէ ստացած բողոքները: Այս՝ Զուիցերիոյ նման երկրի մը ներկայացուցիչներէն, որուն զաւակներէն շատեր « Բուն Հարցին» ականատեսը դառնալով, բազմաթիւ տեղեկագրութիւններ փոխանցած են իրենց իշխանութիւններուն...:

Արդար եւ տակաւին շատ համեստ է, Սփիւռքի տարբեր ավերու մէջ հայորդիներու ընդվզումը: Նոյնքան տեղին եւ հասկնալի են տարբեր ավերու մօտ ծառայող գուիցերիական դիւանագիտական ներկայացուցիչներուն փոխանցուած պահանջագիրները (ոչ՝ ինդրագիրները...): Վստահաբար, նոր «տողու»ներ պիտի ծնին յառաջիկայ օրերուն, ամիսներուն:

Ուրացումի եւ ժխտումի այս արշաւը չի գարմացներ մեզ: Թրքական քարոզչութիւնը պետական, քաղաքական եւ տակաւին այլեւայլ միջոցներով պիտի փորձէ հակազդել Հայոց դէմ կազմակերպուած եւ գործադրուած Յեղասպանութեան հարիւրամեակի վաղորդային մեր հաւաքական աշխատանքներուն:

Բնականաբար պիտի պայքարինք թրքական ապաքարոզչութեան, ուրացումի, ժխտողական քաղաքականութեան վարիչներուն դէմ: «Տողուներն» ու անոնց հովանաւորները պիտի չմնան անպատասխան: Սակայն, որքան ալ տարօրինակ թուի, «տողու»ներ պիտի չըլլան մեր թիրախը: Ճանաչման իրողութիւնը, որքան մարդկային ողբերգութեան մը հաստատումն է, նոյնքան եւ աւելի իրաւունքի հարց է: Մեր հիմնական նպատակը պիտի ըլլայ ստիպել Թուրքիան՝ առերեսուելու իր սեփական պատմութեան հետ: Այստեղ, առաջին հերթին Թուրքիոյ այսօրուան իշխանութիւններուն առջեւ անհրաժեշտ է բարձրացնել մեր ժողովուրդէն յափշտակուած գոյքերուն թղթածրարը: Ժամանակն է, որ սեղանի վրայ ներկայացուի լքեալ գոյքի հարցը, որուն մասնակի լուծում տուած է նոյնիսկ Լոզանի տիրահոշակ խորհրդածողովը:

Լոզանի խորհրդածողովի ընթացքին, որուն պաշտօնապէս չթոյլատրուեցաւ Հայաստանի հանրապետութեան պատուիրակութեան մասնակցութիւնը՝ Մեծն Բրիտանիա, Ֆրանսա, Իտալիա, Յունաստան, Ճափոն, Ռումանիա, Միացեալ Նահանգներ եւ Թուրքիա հաստատեցին այսօրուան Թուրքիոյ սահմանները: Սակայն նոյնիսկ այդ խորհրդածողովին ընթացքին քննարկուեցաւ յափշտակուած հարստութիւններու, կալուածներու հարցը:

Թրքական իշխանութիւնները Լոզանի մէջ ընդունեցին հայերուն վերադարձնել բռնագրաւուած կալուածները, հարստութիւնները կամ՝ անոնց ժառանգորդներուն: Լոզանի խորհրդածողովը 1915 թուականի տեղահանութիւններն ու սպանութիւնները բնորոշած է



իբրեւ « անօրինական կերպով գործադրուած ռազմական միջոց»։ Սակայն, յետագայ տարիներուն, Թուրքիա մերժած է բռնագաղթի ենթարկուած հայերուն վերադարձը։ Լոզանը միաժամանակ որդեգրած է նիւթական կորուստներ կրող հայերուն վնասները փոխհատուցելու սկզբունք։ Թրքական եւ մասամբ Ֆրանսական իշխանութիւնները յետագայ տարիներուն տարբեր տեսակի խարդաւանքներով շրջանցած են այս դրոյթները։ Պիտի ընդունինք, որ մենք եւս չենք հետապնդած մեր իրաւունքներու պաշտպանութիւնը։ Սակայն հիմնական ճշմարտութիւնը այն է, թէ փոխհատուցումի հարցը Լոզանի համաձայնագրի օրերէն ներկայացուած է սեղանի վրայ։ Փոխհատուցումը չի սահմանափակուիր անհատական կորուստներով, այլէ՛ մշակութային, նիւթական հարստութիւններով։ Փոխհատուցումը հաւաքական հարց է եւ կը պահանջէ հաւաքական աշխատանք։ Ցեղասպանութեան ժխտումը, յանցագործութիւնը ուրանալու թրքական իշխանութիւններու կեցուածքին ետին պահուած է հատուցումէն խուսափելու մտահոգութիւնը։

Եւ ինչպէս Հրանդ Տինքը օրին կ'ըսէր եւ շատեր չէին փափաքիր հասկնալ՝ յափշտակուած գոյքերու թղթածրարը Թուրքիոյ ապագային վերաբերող ամենասարսափելի հարցն է, որովհետեւ անոր պատճառով պիտի բացայայտուին անհաւատալի ճշմարտութիւններ, մանաւանդ երբ հարց բարձրանայ, թէ որո՞նց միջեւ, ինչպէ՞ս եւ ինչո՞ւ բաժնուած են այդ հարստութիւնները։ Եւ նոյնինքն նահատակ խմբագիրը կ'աւելցնէր, թէ հայոց յափշտակուած գոյքերուն թղթածրարը պիտի բացայայտէ խորքային Թուրքիոյ տարիներու վրայ կառուցուած կեղծ պատմութիւնը։ Տրամաբանութիւնը պիտի ըսէ՝ եթէ այդ պատմութիւնը խեղաթիւրուած էր, հաւանաբար խեղաթիւրուած պիտի ըլլային այլ բաներ։ Թուրքիոյ մէջ պիտի յառաջանայ էական փոփոխութեան եւ պատմութեան առջեւ առերեսումի պահանջ : Փոխհատուցումի թղթածրարը ինքնաբերաբար պիտի բանայ Ցեղասպանութեան էջը, որուն առջեւ այլընտրանք պիտի չունենան թուրքերը։

ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏԸՄԵԱՆ

ԽՈՂԻ ԱԿՆԹԱՐԹՆԵՐ

Ամէն անգամ որ ոտքս դնեմ ՀԱՅ ԴՊՐՈՑԻ յարկէն ներս, հարագատութեան անանուն գզացումներով կը համակուիմ...սիրտս կը թրթռայ մանկապատանեկան յուշերով,



ուսուցիչներս կը յառնեն յիշողութեանս պաստառին վրայ, մեր դասապահերը կը վերակենդանան տարիներու մշուշին ընդմէջէն՝ երբեմն ամէնէն յետին մանրամասնութիւններով, մանաւանդ հայ գրականութեան պահերը, երբ մեր գրականութիւնը, արեւմտահայ բանաստեղծութիւնը յատկապէս, նոր շունչ ու

կեանք կ'առնէր մեր արտասանութեամբ...Անչափ կը սիրէինք արտասանել Դուրեան, Սիամանթօ, Վարուժան, Թէքէեան, Մեծարենց...անգիր կ'ընէինք անոնց ամէնէն ընտիր քերթուածները, գորս մեր միտքէն ալ կ'արտասանէինք՝ օրուան տարբեր ժամերուն...Անոնք



կը դառնային տեսակ մը յաճախանք, մտասուեռում, կ'ուզէինք թափանցել մէն մի տողին, մէն մի բառին ներքին իմաստներուն մէջ, խորասուզուիլ, վերանալ...Անմոռանալի պահեր՝ արդարեւ, զորս հիմա ալ կը վերապրիմ նոյն թարմութեամբ, նոյն ներշնչանքով, նոյն սքանչացումով հոգեկան...Հայ բանաստեղծութիւնը ՀԱՅ ՀՈԳԻԻՆՆԵՐ ամենէն ճշմարիտ ցոլացումն է.....

ԱՌՕՐԵԱՅ տաղտուկը, մանրուքները, նիթականը ապահովելու միտուած սպառնիչ աշխատանքները մեզ անչափ կը հեռացնեն՝ մեր հոգիէն, կեանքի խորհուրդը խորզալու, գեղեցիկը տեսնելու եւ արարելու, բուն իրականութիւնն ու ճշմարիտը յայտնաբերելու, վսեմին ձգտելու գերագոյն նպատակներէն...ի վերջոյ ապրելու միջոցները շփոթեցնելով կեանքի գերագոյն նպատակներուն հետ...: Մեր առօրեայ կեանքի հեւք ու վազքին մէջ, շատ ուշ կ'անդրադառնանք, որ կորսնցուցած ենք ԷՄԿԱՆԸ, մարդը մարդ դարձնող այն բոլոր բարձրագոյն արժէքներն ու իտէլիները, որոնք հողակալիկ, գետնաքարշ կեանք մը կ'ընծայեն վսեմ, գեղեցիկ փորձառութիւն մը, ԼՈՅՄԻՆ ձգտելու յանդուգն ճանապարհորդութիւն մը....

ԳԵՂԵՑԻԿ ԱՐԱՐՔՆԵՐԸ, գեղեցիկ վարքը մեզ էապէս կ'երջանկացնեն, մեզ արժանի կը դարձնեն մեր ներքին ԵՍ-ին, ներդաշնակ կ'ըլլան մեր անձի արժանաւորութեան հետ....Միւս կողմէ, որեւէ տգեղ վարք կամ արարք մեզ ցուատանջ ապրումներով կը համակէ, քանզի անիկա կը նսեմացնէ մեր մարդկային արժանաւորութիւնը մեր սեփական աչքին առջեւ եւ արտայայտութիւն կը գտնէ որպէս Խղճի Խայթ...Գեղեցիկ, ազնիւ վարքագիծն ու արարքը հարազատ արտայայտութիւնն են, անտարակոյս, գեղեցիկ հոգիին եւ կ'երջանկացնեն զայն....

Ազա՛տ, լիաթո՛ք շնչել ԱՌԱԻՕՏԵԱՆ ԼՈՅՍԸ , որ կը բացուի իր խորհուրդով, արթնացման կոչով, աշխատանքի կանչով...Ամէն նոր արթնացում՝ գիշերային քունէն ետք, հրաւեր է կարծէք նորոգ հայեացքով դիտելու, ընկալելու մեր հի՛ն-հի՛ն աշխարհը, թօթափելու մանաւանդ ա՛լ անիմաստ դարձած սովորութիւններու բռնութիւնը, որ կը կաշկանդէ մտքի եւ հոգիի ազատ թռիչքը...եւ դեռ ի՛նչ-ի՛նչ բռնութիւններ կան, որոնց կուրօրէն կ'ենթարկուինք շատ անգամ, առանց նոյնիսկ գիտակցելու անոնց...ինչպէս ընկերային կարգ ու սարքի ընկալեալ շատ մը կեղծաւորութիւններն ու շողոքորթութիւնները, զորս կը կրկնենք առանց նոյնիսկ մտածելու անոնց մասին....Բայց կրնա՞յ մարդ արարածը ամէն ինչ վերստեղծել նորովի....

ԿԻՐԱԿԻ ԱՌԱԻՕՏ....Տօնական ինչ-որ տրամադրութիւն ունիմ այս առտու, կ'ուզեմ դուրս ելլել քաղաքի եւ քաղաքային կեանքի բանտէն, երթալ բնութեան գիրկը, հաղորդուելու անոր մէն մի մասնիկին հետ, զգալու բնութիւն-տիեզերքի անհունութիւնը, մանաւանդ երբ կը դիտեմ լայնահորիզոն տեսարանը որ կը բացուի հայեացքիս դիմաց՝ լեռներու



լանջին....Կ'ուզեմ դարձեալ եւ դարձեալ խորզալ մարդ-բնութիւն-տիեզերք ներդաշնակութեան խորհուրդը, որ յաճախ կը խամրի, երբ կ'ապրիս քաղաքային կեանքով, ուր առօրեայ, գործնական խնդիրները կը կլանեն քեզ, սեղմելով հոգիդ իրենց արքաններուն մէջ....Հոգիս կարօ՛ւր ունի լայնարձակ հորիզոններու, անպարագիծ տարածութեան, ազատ շնչելու, ճախրելու համար.....

ԾՄԳՈՂ ԱՐՇԱԼՈՅՍՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ....Ամէն Աստուծոյ օր, արեւածագը կու գայ ցրելու խաւարը, արեւալոյսով ողողելու աշխարհն ու բնութիւնը, նոր մաքրութեան շունչը սփռելու ամենուր....Ծագող արեգակին հետ, կը վերագարթնու օրը՝ յոյսի նոր ճառագայթներով արբշիռ: Ինձի այնպէս կը թուի, թէ՛ մարդ էակն ալ կը վերանորոգուի ամէն օր, գիտակցաբար թէ անգիտակցաբար, աշխատանքի նոր տենդով կը լեցուի, նոր երագներ կը հիւսէ, յանուն աւելի լաւ գալիքի....բարին կը յաղթանակէ չարին, լոյսը՝ խաւարին: Որքա՛ն երգեր ու տաղեր ունի լուսապաշտ հայ ժողովուրդը ի փառաբանումն առաւօտեան լոյսին, արեգակին արդար, անոր մէջ տեսնելով հոգեկան լոյսի ծագումը իր էութեան մէջ, իմացութեան լոյսի, անով յուսալով՝ ազգի ու հայրենիքի նոր արշալոյսի կերտումը....նոր գեղեցկութեամբ, նոր վեհութեամբ, նոր ուժականութեամբ օծուն....Արդարեւ, որքա՛ն արշալոյսներ կան, որ պիտի ծագին դէռ....

Պահեր կան, երբ ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆԸ խոկումի տրամադրութիւն կը ստեղծէ ներաշխարհիդ մէջ....մարդ-բնութիւն-տիեզերք խորունկ ներդաշնակութեան ապրումներով կը լիանաս....Բայց մարդ էակը էապէս ընկերային էակ է, ինչպէս պիտի ըսեր հելլէն փիլիսոփան՝ Արիստոտէլը, աւելցնելով որ՝ մարդկային ընկերութենէն դուրս, ան կա՛մ աստուած է, կա՛մ ալ անասուն....Այո՛, մարդուն կեանքը կ'իմաստաւորուի հանրութեան մէջ՝ ընտանիք, համայնք, ազգ ու երկիր...այլապէս ի՞նչ իմաստ պիտի ունենային՝ ՍԷՐ, ԲԱՐԻՔ, ԱԶՆՈՒՈՒԹԻՒՆ, ԱՐԻՈՒԹԻՒՆ եւ նման բարոյական հասկացութիւնները....: Բայց եւ այնպէս, առանձնութեան մէջ է որ մարդ կրնայ խորհրդածել, երեւոյթներու խորը թափանցամտիլ եւ ...նոյնիսկ ստեղծագործել կամ արարել....: Բայց արարելը կամ ստեղծագործելը արդէն Արարիչի յատկանիշ է գերազանցօրէն....եւ նման պահերուն մարդը կը դառնայ Արարիչհամեստագոյն չափերով....

ՄԱՐԴ ԷԱԿԸ թերեւս ամենէն մեծ առեղծուածն է.... անչա՛փ դժուար է մինչեւ վերջ հասկնալ, մինչեւ վերջ ըմբռնել զայն, մինչեւ վերջ վերծանել իր ըրածն ու չըրածը, իր ըսածն ու չըսածը....Խորախորհուրդ այնպիսի ծալքեր ու շերտեր կան անոր հոգւոյն խորը, որոնց մէջ թափանցելը, զայն ամբողջութեամբ յայտնաբերելը պիտի նմաներ ովկիանոսի խորքերը պեղելուն եւ անոր ընդերքը լրիւ բացայայտելուն....: Առեղծուածային ըլլալը չէ՞, սակայն, որ այնքա՛ն հետաքրքրական կ'ընծայէ զայն....



ԵՐԵՎԱՆ...հանդարտաբարոյ կը խոկաս օրուան անցուդարձերուն մասին, որոնք եկան ու անցան, մերթ՝ անհետ, մերթ՝ լուսաւոր, մերթ՝ ալ անլոյս ու մթամած հետքերով....Պահ մը՝ այս, մտերմիկ, մտամփոփուելու ներքին աշխարհիդ մէջ, որ ցերեկուան խաժամուժին ու թոհուրոհին մէջ՝ կը մնայ սքողուած, թաքնուած....Ո՛հ, մարդ էակը էական կարիքը չունի՞ երբեմն ըլլալու ինքն իրեն հետ, ինքնախոստովանանքի մը նման զրուցելու ինքն իր հոգոյն հետ, ամենայն անկեղծութեամբ, ըրածին ու չըրածին մասին, մտորելու, նորանոր երագներ հիւսելու, որոնք վերջ չունին մինչեւ այն ատեն որ կը շնչենք, կ'ապրինք այս Զարմանահրաշ, Առեղծուածային աշխարհին մէջ, գոր այդպէս ալ պիտի չհասցնենք երբեք լիովին հասկնալ....Պէտք ալ չէ թերեւս զայն հասկնալ, այլ միայն՝ զայն զգալ, զայն խորզալ ու ապրի՛լ, խորապրի՛լ...

ԿԵԱՆՔԻ ԱՐԺԷՔԸ արդեօ՞ք անոր քանակական տեւողութեան մէջ է, թէ՞՞ գերազանցօրէն անոր որակին մէջ: Մարդիկ կան, որոնք կ'ապրին երկար մինչեւ խոր ծերութիւն, բայց կը մեկնին անհետ, առանց որեւէ լոյսի շող մը ճառագայթած ըլլալու իրենց համայնքին, շրջապատին....Ուրիշներ ալ կան, թիւով շատ քիչ, որոնք իրենց կեանքի նոյնիսկ շատ կարճ ժամանակին մէջ անգամ, կը հասցնեն աւարտուն հանճարներ ըլլալ, լոյսի առաքեալներ, որոնց թողած լոյսի հետքը կը լուսաւորէ իրենց համայնքն ու ազգը՝ յետ-մահու մանաւանդ, երբ ֆիզիքապէս մեզի հետ չըլլալով՝ կարծէք ա՛լ աւելի կը փայլին իրենց գործերուն մէջ արտացոլուած ոգիով, հոգիի թէ մտքի թռիչքով... Պետրոս Դուրեան, Միսաք Մեծարենց եւ ուրիշներ ցայտուն օրինակն են նման մարդկանց, որոնք պիտի ապրին մեզի հետ, այնքան ատեն որ կայ ու կ'ապրի զիրենք ծնող ժողովուրդը....անոնց թողած լոյսի ճառագայթը չի թաղուիր երբեք: Բոլոր պարագաներուն ալ, կը խորհիմ որ կեանքի հազուագիւտ պահերն են, գերազանցօրէն, որոնք կ'իմաստաւորեն ամբողջ կեանք մը.....

ՄԵՆ ՄԱՅՐԵՆԻՆ....Գանձերու գանձ մեր լեզուն...Ամէն օր զայն կը կարդամ, ամէն օր զայն կ'ըմբռնեմ հոգեմտաւոր անհուն վայելքով, կը խորզամ անոր մէն մի բառին, մէն մի նախադասութեան, դարձուածքին, ասոյթին խորութիւնը, գեղեցկութիւնը, համն ու հոտը, եւ սերս կը բազմապատկուի անոր հանդէպ: Հարուստ է մեր լեզուն, ճկուն, բարեհունչ, ամէնէն նուրբ զգացումը թէ միտքը արտայայտելու ատակ ճշգրտութիւն ունի ան: Աւելին. անիկա ինքնուրոյն մտածողութիւն է, հոգեբանութիւն, նկարագիր, աշխարհագրագոյնութիւն, մշակոյթ եւ պատմութիւն....Մինչեւ վերջին շունչս, կ'ուզեմ զայն սերտել, զայն խորապրիլ, անով հարստանալ, անով հայանալ...Մեր լեզուն մեր ոգեղէն հայրենիքն է, մեր ներքին Հայաստանը....

ՀԱՅՐԵՆԻՔՆԵՐԸ կը կառուցուին քար առ քար, դիզ առ դիզ անոնց ժողովուրդներուն ձեռամբ, քրտինքով, արցունքով, արիւնով....եւ կը ցոլացնեն պատկան ժողովուրդներուն հոգին, ոգին, մաքառելու, պայքարելու կամքն ու կորովը, գեղագիտական ճաշակը, նկարագիրը, ՀԱՐԱՔԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ըլլալով անոնց....Հայրենիքը արժանի կ'ըլլայ իր



ժողովուրդին եւ՝ փոխադարձաբար: Մեր հայրենիքը նոյնպէս կը ցոլացնէ մեր ժողովուրդի հաւաքական պատկերը....անոր բարեմասնութիւնները մերինն են, ինչպէս եւ մերինն են անոր արատները...: Մենք է որ ամէն օր, ամէն պահ, պիտի վերստեղծենք զայն՝ համահունչ մեր իտէալներուն, մեր ոգիին, մեր գիտակցութեան, մեր հոգեկերտուածքին....Հայրենիքը մեր Հաւաքական Տունն է, եւ որպէս այդպիսին՝ մեր ինքնութիւնը հարազատօրէն ցոլացնող ՀԱՅԵԼԻՆ....

ՀԱՅ ՀՈԳԻՒՆ պարզութիւնը, վսեութիւնը, բնութեան հետ ներդաշնակութիւնը....առանց սեթեւեթանքի, անպաճոյճ, իր նախնական նախաստեղծ մաքրութեամբ....ԱՅԴ ՀՈԳԻՒՆ կը գտնենք հայ գրականութեան անմահական էջերուն մէջ.... Պատահաբար ձեռքս անցաւ վերջերս ՕՇԱԿԱՆԻ մէկ անտիպ գրութիւնը՝ արձակ էջեր, ուր ան կը հանդիսադրէ հայ գեղջկական կեանքը, իր չքատրութեան մէջ անգամ այնքան առինքնող ու վսեմ, մարդկային անեղծ տարրերով, բնութեան ու տիեզերքի հետ ներդաշնակ պարզութեամբ, մանկական անկեղծութեամբ տոգորուն, որ կը գրաւէ հոգիդ անմիջապէս....կը դպչի սրտիդ, կ'արթնցնէ անանուն խռովքներ ու յոյզեր, քեզ կը վերադարձնէ քու ՀԱՐԱԶՍ ԷՈՒԹԵԱՆԴ....: Հայ հոգին այնքան բիրեղ է այնտեղ, «քաղաքակրթութեան» դիզած փոշիէն ու ժանգէն ձերբազատ....Հայ գրականութիւնը, հայ մշակոյթը կրնան մեզի վերադարձնել մեր կորսնցուցածը, անաղարտ հայկականութիւնը, որ հիմքերու հիմքը ըլլալու է Ազգային մեր Պետականութեան....

Ազգերու համաշխարհային ընտանիքին մէջ, երանի իւրաքանչիւր ԱԶԳ գտնէ իր յատուկ տեղն ու դերը, ներդաշնակ՝ իր էութեան, իր պատմութեան, իր մշակոյթին, իր դաւանած ու ապրած ԱՐԺԷՔՆԵՐՈՒՆ....եւ իր սեփական ԲՈՅՐՈՎ ու ԹՈՅՐՈՎ ճանչցուի աշխարհի մշակոյթներու անդաստանին մէջ....Նոյնը չէ՞ պարագան մարդ էակին, որ պիտի ունենայ իր յատուկ դերակատարումը, իր տեղն ու դերը՝ ազգային հաւաքականութեան մէջ, որ բխի իր սրտի, հոգիի, իմացութեան որակէն...Ազգի հաւաքական ՈՅԺԸ կարելի է գոյացնել այս կերպով, անտարակոյս, երբ ամէն անհատ ունենայ իր առաքելութիւնը՝ ամբողջութեան մէջ, հարազատ իր էութեան, համահունչ իր խառնուածքին, գիտակցութեան մակարդակին, ոգիին եւ հոգիին....Այս իտէալական կարգն ու սարքը մտածուած էր հազարամեակներ առաջ՝ Հելլէն մեծ փիլիսոփաներուն կողմէ....Արդեօ՞ք շատ է ԻՏԷԱԼԱԿԱՆ...Բայց ԻՏԷԱԼՆԵՐԸ կրնան կեանքի կոչուիլ, եթէ անոնք դառնան համատարած գիտակցութիւն, վճռակամութիւն, յանձնառութիւն....

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՓԵՏՐՈՒԱՐ-ՄԱՐՏ 2014